ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ 2021

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

www.tvradio.am

ՀՌՀ

Հարգելի խորհրդարան,

Գիտակցելով պետության, հասարակության, մեդիահանրության առջև ստանձնած պարտավորությունների կատարման կարևորությունը, Հեռուս-տատեսության և ռադիոյի հանձնաժողովն Ազգային ժողով է ներկայացնում իր գործունեության մասին Տարեկան հաղորդումը: Ստեղծման պահից (2001թ.) ի վեր 2021 թվականը ամենածանրաբեռնված և ամենապատասխանատու տարին էր կարգավորող մարմնի համար: Այն նաև հագեցած էր Հանձնաժողովի արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներով, լուծումներ պահանջող մարտահրավերներով, ձեռքբերումներով, երբեմն՝ բացթողումներով:

Առաջին անգամ մեկ տարվա ընթացքում կարգավորող մարմինը.

ա. հայտարարել, կազմակերպել և անցկացրել է Հանրային թվային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հանրապետական, մայրաքաղաքային, մարզային սլոթների օգտագործման լիցենզավորման մրցույթներ,

բ. հայտարարել, կազմակերպել և անցկացրել է լսողական ծրագրերի հաճախականությունների օգտագործման մայրաքաղաքային և մարզային լիցենզավորման մրցույթներ,

գ. օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել է իր՝ կարգավորող և վերահսկողական գործառույթները՝ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ, 70 000-ից ավել ընտրող ունեցող մի քանի համայնքների ավագանու ընտրությունների ընթացքում,

դ. իրականացրել է ամենամեծ ծավալի (թե եթերաժամերի, թե ընկերությունների քանակով) Հեռարձակողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկում,

ե. հարուցել և վարել է ավելի մեծ քանակի վարչական վարույթներ, քան նախորդ 10 տարիների (2011-2020 թթ.) ընթացքում միասին վերցրած,

զ. ձևավորել է Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրության համար մրցութային հանձնաժողովներ,

է. առաջին անգամ տրամադրել է թույլատրող որոշումներ՝ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության վերաբերյալ գործունեություն իրականացնելու համար,

ը. դարձել է ևս մեկ հեղինակավոր միջազգային մեդիակառույցի անդամ, կնքել համագործակցության Հուշագրեր երկու պետության գործընկեր կարգավորող մարմինների հետ և այլն:

Կարծում եմ, Հանձնաժողովը կարողացել է արդյունավետ կազմակերպել աշխատանքները, ընդունել անկողմնակալ, հանրային շահը սպասարկող որոշումներ, իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտ պայմաններ ստեղծել կարգավորվող լրատվամիջոցների ազատ և անխափան գործունեության համար:

Տիգրան Հակոբյան

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

4. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 11

5. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13

6. ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 14

7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ 16

   - Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ 16
   - Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ 21
   - Առանց լիցենզիա հեռարձակում իրականացնող մեդիածառայություն մատուցողներ 24

8. ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ 26

9. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 29

   - *Լիցենզավորման մրցույթներ* 29
   - *2021 թվականի լիցենզավորման ցուցանիշներ* 31
   - *Անալոգային հեռուստահեռարձակման ավարտը* 35

10. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 36

    - *Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործընթաց* 36
    - *Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն* 37

11. ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 38

- *Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին* 38
- *Էթիկայի նորմերի պահպանման մշտադիտարկում* 39
- *Ընտրությունների լուսաբանման մշտադիտարկում* 43
  - *ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ* 44
  - *ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ընտրություններ* 48
  - *ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու ընտրություններ* 50

12. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 52

- *Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթներ* 52
- *Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական բողոքարկումների վերաբերյալ* 57

13. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ 59

14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 60

15. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ 62

- Տեղեկատվություն Հանձնաժողովի նիստերի և ընդունված իրավական ակտերի վերաբերյալ 62
- Տեղեկատվություն Հանձնաժողով հասցեագրված գրությունների և քաղաքացիների հարցումների վերաբերյալ 64
- Հանձնաժողովի անձնակազմի կառավարում 65

Հավելված 1 67

Հավելված 2 69

Հավելված 3 72

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածների համաձայն կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), Ազգային ժողով է ներկայացնում 2021 թվականի իր գործունեության և տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

Հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (Հեռարձակողների), ցանցային օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը: Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Տարեկան հաղորդման մեջ հակիրճ ներկայացված են՝ Հեռարձակողների ազատության և անկախության վիճակի մասին, Հանձնաժողովի գործունեության անկախության, թափանցիկության և հաշվետվողականության, Հանձնաժողովի լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր գործառույթների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: Այդ տեղեկությունները ներառում են հեղինակազորման, հայտարարված մրցույթների, տրված լիցենզիաների, ցանցային օպերատորների գործունեության լիցենզավորման համար ներկայացված ու մերժված դիմումների, դրանց հիմնավորման, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ներկայացրած տեսալսողական ծրագրերի, Հեռարձակողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկման, բացահայտված խախտումների և դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների այլ լիազորությունների իրականացման, ինչպես նաև՝ Հանձնաժողովի միջազգային համագործակցության և այլ գործառույթների իրականացման մասին: Տարեկան հաղորդման մեջ Հանձնաժողովը ներկայացրել է նաև այն խնդիրները, որոնք խոչընդոտում են Հանձնաժողովի բնականոն և արդյունավետ աշխատանքները:

Սույն տարեկան հաղորդման մեջ ներկայացված բոլոր փաստացի տվյալները Հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների, մշտադիտարկումների, ուսումնասիրությունների, վերլուծությունների, հարցումների արդյունք են:

2. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության հիմնական իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որը երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների, այդ թվում՝ տեսալսողական մեդիայի ազատությունն ու անկախությունը:

Հանձնաժողովը , որպես հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը ապահովող անկախ պետական մարմին, ևս մեկ անգամ արձանագրում է, որ 2018 թվականը բեկումնային էր Հայաստանի հեռարձակող լրատվամիջոցների համար: Իշխանությունների հռչակած ժողովրդավարական սկզբունքները, այն է՝ մամուլի իրական ազատության երաշխավորի դեր ստանձնելը, լրատվամիջոցների գործունեությանը չմիջամտելու պարտավորությունը հնարավորություն տվեց Հեռարձակողներին ազատ, առանց կառավարության միջամտության և ուղղորդման, վարել խմբագրական քաղաքականություն: Միջազգային կառույցների, Հայաստանի մեդիաոլորտի փորձագետների գնահատականները, Հանձնաժողովի ուսումնասիրությունները, գրավոր հարցումները Հեռարձակողներին և գործնական շփումները նրանց հետ վկայում են, որ իշխանությունները հիմնականում հավատարիմ են մնացել իրենց հռչակած սկզբունքներին և ստանձնած պարտավորություններին: Մամուլի ազատության համաշխարհային ցուցիչի համաձայն՝ Հայաստանը 2019-2020 թվականներին 2018 թվականի համեմատ 19 կետով բարելավել էր իր դիրքերը՝ զբաղեցնելով 61-րդ տեղը ցուցակում ընդգրկված 180 պետությունների շարքում: Վերը նշված ցուցիչի համաձայն (https://rsf.org/en/ranking/2021), Հայաստանը 2021 թվականին 2020 թվականի համեմատ 2 կետով զիջել է իր դիրքերը՝ զբաղեցնելով ցուցակում 63-րդ հորիզոնականը: Ըստ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից տրված եզրակացության՝ դա կապված է լրագրողների նկատմամբ դատական գործերի ավելացման և առանց հասարակության ու լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ քննարկման ԶԼՄ-ներին վերաբերող որոշումների կայացման հետ:

2021 թվականին Հեռարձակողների խմբագրական և կադրային քաղաքականությանը միջամտելու, կամ միջամտելու փորձերի, կարծիքների արտահայտման իրավունքը սահմանափակելու, Հեռարձակողների բնականոն աշխատանքը խոչընդոտելու վերաբերյալ էական նշանակություն ունեցող դիմումներ և բողոքներ Հանձնաժողովը չի ստացել, իսկ ստացած բողոքների ընդհանուր քանակը 2020 թվականի համեմատ զգալի նվազել է: Այդ նվազումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. 2020 թ. ընթացքում բողոքների մեծ մասը վերաբերել էր եթերի ժամանակ Հեռարձակողների տաղավարներում լրագրողների, հաղորդավարների դիմակ կրելու պարտադիր պահանջին և պահանջը չկատարելու դեպքում՝ Հեռարձակողների աշխատանքներին իրավապահ մարմինների միջամտությանը: Հաշվետու տարվա ընթացքում այդպիսի պահանջներ Հեռարձակողներին չեն ներկայացվել:

Հաշվետու տարում, ինչպես և 2020 թվականին, մի քանի Հեռարձակողներ Հանձնաժողովի ուշադրությունն են հրավիրել որոշ պաշտոնական անձանց, այդ թվում՝ Ազգային ժողովի պատգամավորների խտրական, անհարգալից վերաբերմունքի դրսևորումներին որոշ լրատվամիջոցների և լրագրողների նկատմամբ: Հանձնաժողովի կարծիքով բացասական այդպիսի դրսևորումները համակարգված բնույթ չեն կրել և չեն վտանգել լրատվամիջոցների և լրագրողների ազատությունն ու անկախությունը, չեն խոչընդոտել տեղեկատվություն ստանալու և տարածելու նրանց իրավունքը: Միաժամանակ, Հանձնաժողովը ևս մեկ անգամ հիշեցնում է, որ լրագրողների գործունեությունն ունի հանրային նշանակություն, ուստի օրենսդիր, գործադիր, դատական մարմինները և այդ մարմինների ներկայացուցիչները պետք է առաջին հերթին առաջնորդվեն լրագրողների անկողմնակալության, բարեխղճության, նրանց մոտ մասնագիտական ունակությունների առկայության կանխավարկածով:

2021 թվականին Հանձնաժողովը շարունակել է հետևողականորեն պաշտպանել կարգավորման ներքո գտնվող լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը, հանդես է եկել հայտարարություններով, միջնորդություններով և պարզաբանումներով, կոնֆլիկտային իրավիճակներում բազմաթիվ անգամ միջնորդի դեր է ստանձնել Հեռարձակողների և իշխանության տարբեր ինստիտուտների միջև, համագործակցել է տեսալսողական մեդիայի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Միաժամանակ, Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում սկզբունքորեն պայքարել է խոսքի ազատության չարաշահումների դեմ, վարչական տույժերի է ենթարկել մի շարք Հեռարձակողների:

Սակայն Հանձաժողովի վերոշարադրյալ ընդհանուր դրական գնահատականը ամենևին չի նշանակում, որ հեռարձակող լրատվամիջոցները իրականում ազատ և անկախ են: Այս ոլորտի վրա տևական ժամանակ բացասաբար ազդում են բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնց թվում են՝

ա. վերջին տարիների ընթացքում գովազդի ծավալների կտրուկ անկումը (2019-2021 թթ. գովազդային մուտքերի ծավալները ներկայացված են Հավելված 1-ում),

բ. տեսալսողական մեդիածառայություն մատուցողների իրական սեփականատերերի բացահայտման՝ օրենսդրությամբ սահմանված մեխանիզմների բացակայությունը,

գ. սահմանափակ ռեսուրսի (սլոթների և հաճախականությունների) օգտագործման պետական հայեցակարգի (ռազմավարության) բացակայությունը,

դ. կարգավորման ներքո գտնվող Հեռարձակողների և համացանցում տեսալսողական ծառայություններ մատուցող ընկերությունների միջև մրցակցային անհավասար պայմանները,

ե. օրենսդրության անկատարությունը:

Նշված և այլ գործոններ հաճախ զրկում են Հեռարձակողներին ֆինանսական անկախությունից, նրանց էլ ավելի մեծ կախման մեջ են գցում հիմնադիրներից և սեփականատերերից, ցանցային տեսալսողական մեդիաների հետ մրցակցությունը իջեցնում է բովանդակության որակը և այլն: Պետք է հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հեռարձակողների կախվածությունը խոշոր գովազդատուներից հաճախ հանգեցնում է մեդիածառայություն մատուցողների «ինքնագրաքննությանը», երբ Հեռարձակողը ստիպված է լինում սահմանափակել խմբագրական անկախությունը՝ եկամտի աղբյուրների կորստից խուսափելու համար:

44-օրյա պատերազմի հետևանքները, հասարակության անկումային տրամադրությունները, քաղաքական լարվածությունն ու անկայունությունը պատճառ կամ առիթ հանդիսացան լիցենզավորված կամ հեղինակազորված մի շարք տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար, որպեսզի նրանք, անտեսելով հանրային շահը, եթերային բովանդակության անբաժանելի բաղադրիչ դարձնեն ատելության խոսքը, ապատեղեկատվությունը, վիրավորանքը, սպառնալիքը: Այդ լրատվամիջոցների վերափոխումը տարատեսակ քաղաքական ուժերի և անհատների քարոզչական գործիքի՝ առավել ակնհայտ էր 2021 թվականի հունվար-հունիս ամիսներին՝ Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններին նախորդող ժամանակահատվածում:

Մեդիածառայություն մատուցողները երբեմն չեն ցանկանում գիտակցել, որ կարծիք արտահայտելու ազատությունը չի կարող բացարձակ լինել և ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է անձի արժանապատվության ոտնահարումը, առանձին անձանց կամ խմբերի հանդեպ ատելության տարածումը, անկարգությունների կամ հանցագործությունների հրահրումը և այլն:

Հանձնաժողովը ևս մեկ անգամ արձանագրում է, որ մի շարք Հեռարձակողների խմբագրական և կադրային քաղաքականությունը հաճախ հիմնված է նրանց հիմնադիրների, սեփականատերերի քաղաքական պատվերների վրա: Տարատեսակ ազդեցություններով և միջամտություններով էր նաև պայմանավորված այն հանգամանքը, որ 2021 թվականին մի շարք Հեռարձակողներ շարունակեցին անտեսել հանրային շահը, քաղաքացիների իրավունքը՝ անկողմնակալ և բազմազան տեղեկատվություն ստանալու համար:

Եվ այս հանգամանքը թույլ չի տալիս արձանագրել, որ Հայաստանում կայացած է իրականում ազատ և անկախ մեդիածառայություններ մատուցողների էկոհամակարգ, որը կբնութագրվեր Հեռարձակողների լիարժեք անկախությամբ, ազատությամբ, բազմակարծությամբ, բազմազանությամբ և կսպասարկեր ՀՀ քաղաքացու պահանջմունքը ստանալ անկողմնակալ, բազմազան տեղեկատվություն:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Կարգավորող պետական մարմինը, կարգավորող պետական մարմնի անդամները և կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Չի թույլատրվում անօրինական ազդեցություն և միջամտություն նրանց գործունեությանը:» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, հոդված 32)

Հանձնաժողովն արձանագրում է, որ հաշվետու տարում ապահովված է եղել իր գործունեության անկախությունը, որոշումների կայացման ինքնուրույնությունը: Պետական մարմինները, գործադիր և օրենսդիր իշխանության ներկայացուցիչները, քաղաքական ուժերը չեն միջամտել Հանձնաժողովի բնականոն աշխատանքներին կամ որոշումների ընդունմանը: Խորհրդարանում ներկայացված և արտախորհրդարանական քաղաքական ուժերի, հասարակական սեկտորի

ներկայացուցիչների, միջազգային կառույցների, լրատվամիջոցների գնահատականներն ու արձագանքները Հանձնաժողովի գործունեության և կայացրած որոշումների վերաբերյալ ևս փաստում են այդ մասին: Մասնավորապես, Եվրախորհրդարանի փորձագետների կողմից պատրաստված «Հայաստանի մեդիատիրույթի պահանջմունքների գնահատումը» զեկույցում նշված է, որ «…քաղաքական ղեկավարությունը չի միջամտում կարգավորման գործընթացներին, և Հանձնաժողովը գործունեության նշանակալի ազատություն ունի»:

2021 թվականին եղել են հազվադեպ փորձեր, հատկապես լիցենզավորման մրցույթների գործընթացների ժամանակահատվածում՝ տարատեսակ ճնշումներ գործադրել Հանձնաժողովի անդամների վրա, ուղղորդել Հանձնաժողովը համապատասխան որոշումներ ընդունելու նպատակով, սակայն այդպիսի փորձերը նպատակին չեն հասել և չէին կարող հասնել:

Տեսալսողական մեդիայի կարգավորման գործընթացներին միջամտության բացակայությունը, Հանձնաժողովի տարբեր ստորաբաժանումների մանրակրկիտ և որակյալ ուսումնասիրություններն ու վերլուծությունները, մշտադիտարկման աշխատանքներն ու այդ աշխատանքների իրավաբանական ուղեկցությունը թույլ տվեցին 2021 թվականին մեծ արդյունավետությամբ անցկացնել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման 12 մրցույթ և լսողական ծրագրերի հաճախականության օգտագործման լիցենզավորման 5 մրցույթ: Ստեղծման պահից (2001թ.) ի վեր նման քանակի մրցույթներ մեկ տարում կարգավորող մարմինը չի անցկացրել:

2021 թվականին Հանձնաժողովի պաշտոնական ինտերակտիվ կայքը (www.tvradio.am) ձևափոխվել և համալրվել է նոր բաժիններով, ինչը թույլ է տվել հավելյալ անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդել հանրությանը, պատշաճ և ժամանակին ներկայացնել կատարված աշխատանքները, դրանց արդյունքները, ապահովել հետադարձ կապը քաղաքացիների հետ: Ակտիվ գործում է նաև կարգավորող մարմնի ֆեյսբուքյան էջը (https://www.facebook.com/tvradio.Armenia/):

Ինչպես և նախորդ տարիներին՝ Հանձնաժողովի նիստերն անցկացվել են դռնբաց (բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի) և հաճախ՝ կապված հարցի կարևորությունից և հանրային հետաքրքրությունից՝ ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում: Մասնավորապես, ուղիղ հեռարձակմամբ է ցուցադրվել լիցենզավորման մրցույթների ողջ գործընթացը:

Անկախ կորոնավիրուսային համավարակի (COVID-19) առաջացման և տարածման հետևանքով ստեղծված դժվարություններից և սահմանափակումներից՝

Հանձնաժողովը կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, դասընթացներ (այդ թվում առցանց եղանակով) լիցենզավորված Հեռարձակողների և ցանցային օպերատորների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնագիտական էթիկայի պահպանման, նոր օրենքի կիրառման թեմաներով քննարկումներ և դասընթացներ են անցկացվել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հեռարձակողների համար: Տեսալսողական ծառայություններ մատուցողների աշխատանքները կանոնակարգելու համար Հանձնաժողովը ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում լիցենզավորված և հեղինակազորված տեսալսողական ծրագրեր մատուցողների և հեռարձակողների ներկայացուցիչների համար կազմակերպել է սեմինար-դասընթացներ՝ ներգրավելով օտարերկրյա մասնագետներին:

Հանձնաժողովի գործունեության մասին հանրության իրազեկման նպատակով կազմակերպվել և անցկացվել են մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ հարցազրույցներ: Հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ տեղեկատվական նյութեր: Մասնավորապես, Հանձնաժողովի կայքում հրապարակվել է 136 մամուլի հաղորդագրություն և հայտարարություն, իսկ կարգավորող մարմնի նախագահի, անդամների և անձնակազմի աշխատակիցների հետ լրատվամիջոցները կազմակերպել են ավելի քան 50 հարցազրույց:

Հեռարձակող կազմակերպությունների և մեդիամասնագետների համար Հանձնաժողովը պարբերաբար պատրաստել և հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքներ, վերլուծական հոդվածներ, գծապատկերներ, մշտադիտարկման արդյունքների ամփոփագրեր և այլն:

Հանձնաժողովը գոհունակությամբ նշում է, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում ամրագրվել է Հանձնաժողովի ֆինանսական անկախությունը երաշխավորող լրացուցիչ մեխանիզմ, որը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված ստանդարտներին:

Հանձնաժողովի գործունեության անկախության լրացուցիչ երաշխիք է նաև օրենսդրորեն ամրագրված այն դրույթը, որ Հանձնաժողովը, Հանձնաժողովի անդամները և Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են, ենթարկվում են միայն օրենքին, և չի թույլատրվում անօրինական ազդեցություն և միջամտություն նրանց գործունեությանը:

4. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019-2020 թվականների տարեկան հաղորդումներում Հանձնաժողովը կարևորել էր տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող նոր օրենքի ընդունումը: 2020 թվականի օգոստոսի 07-ին ուժի մեջ մտած «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանվել են նոր կարգավորումներ, փոփոխվել և ավելացել նոր հասկացություններ: Կարող ենք արձանագրել, որ տեսալսողական մեդիայի գործունեությունը կարգավորող նոր օրենքն ուղղված է արդեն իսկ գոյություն ունեցող տարբեր մեդիաընկերությունների գործունեությունը դյուրին դարձնելուն, վերջիններիս դերին և դիրքին համաչափ ու համապատասխան իրավունքների և պարտականությունների համակարգ ստեղծելուն՝ խուսափելով ավելորդ կամ անհամաչափ սահմանափակումներից: Դյուրինացվել է նաև նոր մեդիա ընկերությունների մուտքը շուկա: Սակայն պետք է արձանագրել, որ տեսալսողական մեդիա ոլորտի ազատականացմանը զուգահեռ Հանձնաժողովի համար նկատելի են որոշ խնդիրներ, որոնք առաջացել են Օրենքի դրույթների և դրանք գործնականում կիրառելու արդյունքում: Ներկայացնենք այդ խնդիրներից մի քանիսը.

- «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի ընդունումից հետո Հանձնաժողովի կողմից պարբերաբար բարձրաձայնվել է տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառող օրենքներում, մասնավորապես «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Պետական տուրքի մասին» և այլ օրենքներում ևս փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին, ինչը մինչ օրս չի կատարվել և շարունակում է խոչընդոտել Հանձնաժողովի բնականոն աշխատանքը: Օրենսդրության մեջ այդ փոփոխությունները թույլ կտային, մասնավորապես, տարբեր օրենքներում ամրագրված սահմանումները, հստակեցնել և բերել ընդհանրական սահմանումներ, բացառել տարընթերցումներն ու իրարամերժ մեկնաբանությունները:
- Նոր օրենքով նախատեսված տեսալսողական մեդիայի կարգավորման ազատականացումը ողջունելի է, սակայն պարունակում է վտանգներ ՀՀ տեղեկատվական անվտանգության համար: Հայաստանի հանրային մուլտիպլեքսով հեռարձակվող և կաբելային ցանցերով տարածվող օտարերկրյա տեսալսողական ծրագրերը հաճախ սպառողներին պարտադրում են մեր հանրային և պետական շահերի հետ չհամընկնող տեղեկատվական օրակարգեր, որոնց դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար Հանձնաժողովը օրենսդրութամբ նախատեսված կարգավորման գործիքակազմ չունի:

● Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ Օրենքով նոր հնարավորություններ ընձեռվեցին մարզային տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար: 2021 թվականին, առաջին անգամ թվայնացումից հետո, Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերն ունեցան մարզային հեռարձակողներ: Սակայն Հեռարձակողների կողմից իրենց սփռման տարածքներին համապատասխան տեսալսողական ծրագրեր հեռարձակելու ընթացքում առաջ եկան նաև տեխնիկական խնդիրներ, մասնավորապես՝ Տավուշի մարզում տեղական Հեռարձակողը չի կարողանում ապահովել հեռարձակում 31 բնակավայրում, որոնց 80 %-ը սահմանամերձ է, Լոռու մարզում Հեռարձակողը կարողանում է ապահովել միայն մարզի բնակավայրերի մոտ 73%-ը, իսկ Գեղարքունիքի մարզում չեն կարողանում հեռարձակում ապահովել 13 բնակավայրերում: Հանձնաժողովի կարծիքով՝ օրենսդրության մեջ պետք է ամրագրել կառավարության պարտավորությունը ապահովելու սփռման ամբողջ տարածքը, երաշխավորելով մարզերի ամբողջ բնակչության համար տեղեկատվություն ստանալու իրավունքը:

● Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթ հայտարարվում է ազատ հաճախականությունների առկայության դեպքում, սակայն մինչ օրս ազատ հաճախականություն չլինելու, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն չկատարելու (մրցույթի մասնակցության համար պետական տուրքը այժմ կազմում է 100 միլիոն դրամ) հետևանքով Հանձնաժողովը չի կարողանում կազմակերպել մրցույթը: Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում:

● Լիցենզիա տրամադրելու մրցութային գործընթացում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր դիրքորոշումն արտահայտում է լիցենզիա տրամադրելու վերաբերյալ կոնկրետ սուբյեկտին, կոնկրետ վարկանիշային միավորով՝ կախված Օրենքով նախատեսված կոնկրետ չափանիշներից (օրինակ՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը, ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը): 2021 թվականի ընթացքում անցկացված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման և լսողական ծրագրերի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթներն անցկացնելուց հետո Հանձնաժողովը արձանագրում է, որ անհրաժեշտ է փոխել գնահատման չափանիշները՝ անդամների կողմնակալությունը մրցույթի գնահատման ժամանակ նվազագույնին հասցնելու համար:

● Օրենքով սահմանված կարևորագույն նոր նորմերից է էթիկայի կանոնագիրը և էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցների ապահովումը: Լիցենզավորված բոլոր Հեռարձակողները ունեն էթիկայի

կանոնագիր, ինչպես նաև իրենց կողմից ընդունված էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցներ: Սակայն, Հեռարձակողների ինքնակարգավորման մեխանիզմը դեռևս ունի շատ թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել, օրինակ, այն, որ Հեռարձակողները պատրաստ են իրենց եթերում հրապարակել էթիկայի համապատասխան մարմնի որոշումը և շարունակել խախտել այդ նորմերը, իսկ Հանձնաժողովը չունի Հեռարձակողի կողմից էթիկական նորմերը մի քանի անգամ խախտելու դեպքում ավելի խիստ միջոցների դիմելու վերահսկողական որևէ մեխանիզմ:

- Տեսալսողական մեդիա ծառայությունների վերաբերյալ օրենքի շրջանակներում պետք է կարգավորվեն տեսալսողական հաղորդակցության այն բոլոր տեսակները, որոնք գտնվում են ծառայություն մատուցողի խմբագրական անձնակազմի պատասխանատվության ներքո: Սա ներառում է ոչ միայն տեսալսողական և լսողական ծրագրեր հեռարձակողները, այլ նաև ըստ պահանջի ծառայությունները (անկախ նրանից, թե ինչ հատուկ տեխնոլոգիա և հարթակ է օգտագործվել դրանք բաշխելու համար):

5. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել են 110 լիցենզավորված ընկերություններ, այդ թվում՝ 22 տեսալսողական, 23 լսողական մեդիածառայություն մատուցողներ և 65 ցանցային օպերատորներ: Հեղինակազորվել են 53 ընկերություններ, որոնցից 28-ը լիցենզավորվել են մրցույթների արդյունքում:



«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի համաձայն՝ առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել են Հանրային հեռարձակողի 2 տեսալսողական և 4 լսողական ծրագրեր, իսկ միջպետական պայմանագրերի հիման վրա հեռարձակվել են 4 տեսալսողական և 2 լսողական ծրագրեր:

Ստորև ներկայացվում է տեսալսողական մեդիայի ոլորտում գործող ընկերությունների թվաքանակը արտացոլող գծապատկերը՝



6. ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հեղինակազորումն իրավաբանական կամ ֆիզիկական անձին տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակ շնորհող փաստաթուղթ է (վկայագիր), որը անժամկետ և պարզեցված ընթացակարգով տրամադրում է Հանձնաժողովը:

Հեղինակազորումն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս առանց լիցենզիայի մատուցել տեսալսողական մեդիածառայություններ՝ ցանցային օպերատորի, իսկ հետագայում՝ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրման դեպքում նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով:

Հանձնաժողովի կողմից 2021 թվականին հեղինակազորվել է 16 ֆիզիկական և իրավաբանական անձ, դադարեցվել հեղինակազորման 1 վկայագրի գործողությունը՝ համաձայն դիմումի:

2021 թվականին տրամադրված հեղինակազորման վկայագրեր

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՍԵՐԻԱՆ, ՀԱՄԱՐԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	
1	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՎ № 039	03.02.2021թ.
2	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	ՀՎ № 040	03.02.2021թ.
3	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՎ № 041	19.02.2021թ.
4	«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊԸ	ՀՎ № 042	19.02.2021թ.
5	«ԻԳԼ ԱՅ» ՍՊԸ	ՀՎ № 043	12.03.2021թ.
6	«ՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՎ № 044	02.04.2021թ.
7	«ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ	ՀՎ № 045	27.05.2021թ.
8	«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ	ՀՎ № 046	04.06.2021թ.
9	«ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՎ № 047	11.06.2021թ.
10	«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՎ № 048	11.06.2021թ.
11	«ՍՎԳ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	ՀՎ № 049	17.06.2021թ.
12	«ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՎ № 050	06.08.2021թ.
13	«168 ԺԱՄ» ՍՊԸ	ՀՎ № 051	06.08.2021թ.
14	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	ՀՎ № 052	04.11.2021թ.
15	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	ՀՎ № 053	04.11.2021թ.
16	«ԷԳԱԼԻՏԵ» ՍՊԸ	ՀՎ № 054	26.11.2021թ.

Հեղինակազորված ընկերությունների տեսալսողական ծրագրերի ընդհանուր թիվը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 97 (*Հավելված 2)*, և նշված ծրագրերի մի մասը հեռարձակվում են հանրային մուլտիպլեքսում, իսկ մյուս մասը վերահաղորդվում են ցանցային օպերատորների կողմից, որի սխեմատիկ պատկերը ներկայացված է ստորև.



7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Տեսալսողական ծրագրեր հեռարձակող լիցենզավորված 22 ընկերություններ հեռարձակում են իրականացրել հանրային մուլտիպլեքս ցանցում, այդ թվում՝ 5 հանրապետական, 7 մայրաքաղաքային և 10 մարզային սփռման:

Օրենքի համաձայն՝ Հանրային հեռարձակողն առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով կարող է սփռել միայն մեկ ծրագիր, իսկ հավելյալ ծրագիր կարող է հեռարձակել մրցութային կարգով ստացած լիցենզիայի հիման վրա: Նշված իրավակարգավորման համաձայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունը, մասնակցելով 2021 թվականին հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթին, ստացել է սլոթի օգտագործման մայրաքաղաքային սփռման լիցենզիա և հեռարձակում է «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիրը:

Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված 5 Հեռարձակողներն են՝

«ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ծրագիր
«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ

«Ա-ԹԻՎԻ» ծրագիր
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

«ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ»
ՓԲԸ

Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված 7 Հեռարձակողներն են՝

«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ

«21 TV» ծրագիր
«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագիր
«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ

«ԱՐՄՆՅՈՒԶ» ծրագիր
«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր
«ՇԱՐԿ» ՍՊԸ

«ՆՈՒՌ» ծրագիր
«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Հանձնաժողովն երաշխավորելով տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը, միաժամանակ միշտ կարևորում է վերջիններիս կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը, տեսալսողական հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը:

Ստորև ներկայացնում ենք հաշվետու տարում Հանձնաժողովի կողմից փաստացի տվյալների հիման վրա՝ հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքի և թեմատիկ ուղղվածությունների, ինչպես նաև տեսալսողական տեղեկատվության լեզվի վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքները.



ԱՅԼ¹ - հայկական ընկերությունների կողմից պատրաստված ծրագրեր, հաղորդումներ



Իսկ ահա այսպիսի կառուցվածք ունի մարզային տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը, թեմատիկ ուղղվածությունները և լեզվի վերաբերյալ տեսալսողական տեղեկատվությունը

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱՅԼ[1] - հայկական ընկերությունների կողմից պատրաստված ծրագրեր, հաղորդումներ



Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված 10 Հեռարձակողներն են՝

Արագածոտնի մարզ	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ծրագիր «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ
Արարատի մարզ	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ»ծրագիր
Շիրակի մարզ	«ՑԱՅԳ» ծրագիր *«ՑԱՅԳ» ՍՊԸ*
Լոռու մարզ	«ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր *«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ*
Վայոց ձորի մարզ	*«ԶԱՆԳԵԶՈՒՐ ՏՎ» ծրագիր* *«ԶԱԳԵԶՈՐ»* *ՀԵՌՈՒՍՏԱԿԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ*
Արմավիրի մարզ	«ԱՐՄԱ ԹԻ-ՎԻ» ծրագիր «ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ	*«ԳԵՂԱՄԱ» ծրագիր* *«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ*
Կոտայքի մարզ	*«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ծրագիր* *«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ՍՊԸ*
Սյունիքի մարզ	*«ԶԱՆԳԵԶՈՒՐ ՏՎ» ծրագիր* *«ԶԱԳԵԶՈՐ»* *ՀԵՌՈՒՍՏԱԿԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ*
Տավուշի մարզ	*«ՏԱՎՈՒՇ ՏՎ» ծրագիր* *«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ*

Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

Լիցենզավորված լսողական ծրագրեր հեռարձակող 23 ընկերություններից 3-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 16-ը՝ Երևան քաղաքի և 4-ը՝ մեկ մարզի տարածքում:

2021 թվականին լսողական ծրագրեր հեռարձակողների թիվն ավելացել է: Մասնավոր լսողական մեդիածառայություն մատուցողների համար մրցույթով հաճախականությունների տրամադրման օրենսդրական սահմանափակումները հանվելուց հետո հաշվետու տարվա ընթացքում նոր հաճախականությունների համար անցկացվել են լսողական ծրագրերի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթներ: Այս առումով Հանձնաժողովը կարևորում է մարզային սփռում իրականացնող լսողական մեդիածառայություն մատուցողների քանակի աճը: Տեղական հեռարձակումը մարզերի բնակչության համար կիանդիսանա իրազեկման, մշակույթի և կրթության տարածման միջոց:

Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված 3 լսողական մեդիածառայություն մատուցողներն են՝

«ՌԱԴԻՈ ԵՐԵՎԱՆ» ծրագիր
«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՋԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՊՌՈ»ՍՊԸ

Երևան քաղաքում սփռում իրականացնող լիցենզավորված 16 լսողական մեդիածառայություն մատուցողներն են՝

«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ծրագիր
«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ծրագիր
«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ

«ԻՄՊՈՒԼՍ» ծրագիր
«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ

«ՖՄ-105.5» ծրագիր
«ՖՄ-105.5» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ

«ԱՐՄՆՅՈՒԶ ՖՄ» ծրագիր
«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ

«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ծրագիր
«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ

«ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ծրագիր
«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ծրագիր
«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՓՈՓ ԷՖ ԷՄ» ծրագիր
«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ
«

«ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

«ՌԱԴԻՈ ԴՐԱՅՎ» ծրագիր
ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ

«ԷՖ ԷՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

«ԶԱՐԿ ՖՄ» ծրագիր
«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Մարզային սփռում իրականացնող 4 լսողական մեդիածառայություն մատուցողներն են՝

Լոռու մարզ «ՄԻԳ» ծրագիր
«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ

Շիրակի մարզ «ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

Արարատի մարզ «ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

Ահա այսպիսին է լսողական մեդիածառայություն մատուցողների ծրագրերի եթերի կառուցվածքը և թեմատիկ ուղղվածությունները.



ԱՅԼ[1] - ընկերությունների կողմից պատրաստված լսողական ծրագրեր, հաղորդումներ

Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Օրենքի համաձայն առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականին հեռարձակում իրականացրել են Հանրային և միջպետական պայմանագրի հիման վրա գործող հեռարձակողները:

Հաշվետու տարում հեռարձակվել են Հանրային հեռարձակողի 2 տեսալսողական՝ հանրապետական սփռում ունեցող «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Շողակաթ» տեսալսողական ծրագրերը, ինչպես նաև 4 լսողական ծրագրեր՝ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի հանրապետական սփռում ունեցող «Առաջին ծրագիր» և մայրաքաղաքային սփռում ունեցող «Իմ ռադիո», «ՎԷՄ» կրթական-մշակութային և «Արևիկ» ծրագրերը:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՇՈՂԱԿԱԹ» ծրագիր
«ՀՈԳԵՎՈՐ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՐԵՎԻԿ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՎԷՄ» կրթական-մշակութային ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԻՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

Հարկ է նշել, որ մինչև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի ուժի մեջ մտնելն օտարերկրյա տեսալսողական ծրագրերը Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվում էին լիցենզիայի հիման վրա, սակայն 2021 թվականից հանրային մուլտիպլեքսում օտարերկրյա տեսալսողական ծրագրերի հեռարձակումներն իրականացնում են առանց լիցենզիայի՝ միջպետական պայմանագրի հիման վրա:

ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված «Զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի համաձայն հեռարձակվում են հանրապետական սփռում ապահովող 1 տեսալսողական՝ «ՌՏՌ-Պլանետա» ծրագիրը և մայրաքաղաքային սփռում ապահովող 2 տեսալսողական՝ «Ռոսիյա-Կ», «Առաջին ալիք. Համաշխարհային ցանց» մեդիածառայություն մատուցողներ՝ յոթ տարի ժամկետով: Համաձայնագրի որոշ պահանջների նկատմամբ վերահսկումն իրականացնող մարմինը հայկական կողմից Հանձնաժողովն է և իր վերահսկողական լիազորությունը լիարժեք իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել որոշ դրույթների և սահմանումների հստակեցման, ուստի ձևավորել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Դրույթների հստակեցումներից հետո դրանք կառաջարկվեն ռուսական կողմին և փոխադարձ համաձայնություն ձեռք բերելուց հետո կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կամրագրվեն որպես Համաձայնագրի հավելվածներ:

«ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» ծրագիր

«ՌՈՍԻՅԱ-Կ» ծրագիր

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» ծրագիր

Միջպետական պայմանագրերի հիման վրա հեռարձակվում են նաև «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» ծրագրերը (ռուսերեն) և 2 լսողական՝ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» ծրագիրը (ռուսերեն) և «Էռ Էֆ Այ» (RFI) ծրագիրը (Ֆրանսիա, ֆրանսերեն):

«ՄԻՐ» ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՄԻՐ» լսողական ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«RFI» ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼՍՈՂԱԿԱՆ
ծրագիր

8. ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

Օրենքով հստակ տարանջատվում են տեսալսողական մեդիածառայություն մատուցողները և տեսալսողական տեղեկատվություն տարածողները: Տեսալսողական տեղեկատվություն տարածողները՝ ցանցային օպերատորներն ընդամենը ազդանշանն օգտատերերին հասցնողներն են և տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կարող կրել (նախորդ օրենքով կրում էին պատասխանատվություն):

Ահա այսպիսին է մալուխային ցանցերով տարածվող տեսալսողական ծրագրերի աշխարհագրությունը.

Օրենքով նվազեցվել է ցանցային օպերատորների լիցենզավորման հետ կապված վարչարարությունը, հնարավորություն է ստեղծվել լիցենզիա ստանալ պարզեցված ընթացակարգով:

Տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնող 65 ցանցային օպերատորներից 8-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 11-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 7-ը՝ Երևան քաղաքի, 4-ը՝ մեկից ավելի մարզերի և 35-ը՝ մեկ մարզի տարածքում (*Հավելված 3):*

Ահա, այսպիսին է մալուխային ցանցերով վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի պատկերը ՝ ըստ թեմատիկ ուղղվածության և ըստ լեզուների.

ՎԵՐԱՀԱՂՈՐԴՎՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԼԵԶՈՒՆ



ԱՅԼ¹ - թեմատիկ ուղղվածության այլ տեսալսողական ծրագրեր



Ստորև ներկայացնում ենք 2019-2021 թվականների ընթացքում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ ըստ հեռարձակման լեզուների ՝ ըստ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունների արդյունքի.

ՎԵՐԱՀԱՂՈՐԴՎՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԵԶՈՒՆ (%)



9. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Լիցենզավորման մրցույթներ

Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման և լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորումն իրականացվում է մրցութային ընթացակարգով:

Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողների լիցենզիաների գործողության ժամկետները լրանում էին 2021 թ. հունվարին, հետևաբար, Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքով՝ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց չորս ամիս առաջ՝ 2020 թվականի սեպտեմբերին, հայտարարել էր հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթ՝ 5 սլոթների քանակով, մայրաքաղաքային սփռման մրցույթ՝ 7 սլոթների քանակով և մարզային սփռման 10 մրցույթ՝ յուրաքանչյուր մարզում մեկական սլոթով:

Հանձնաժողովի կողմից 2021 թ. անցկացվել են 22 սլոթի քանակով հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման 12 մրցույթներ, ընդ որում ՀՀ Արարատի մարզի և Վայոց ձորի մարզի տարածքներում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթները հայտեր չներկայացվելու հիմքով մեկ անգամ չկայացած են հայտարարվել և 2021 թ. կրկին հայտարարվել և կայացել են, ինչպես նաև մայրաքաղաքային սփռման մրցույթի արդյունքում ազատ մնացած 1 սլոթի քանակով 2021 թվականին ևս հայտարավել է նոր մրցույթ, որի արդյունքում հաշվետու տարվա հունիսին ազատ սլոթը զբաղեցվել է:

Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման նույնական պայմաններով մրցույթների դեպքում Հանձնաժողովը հայտարարել է մեկ մրցույթ՝ սահմանելով սլոթների քանակը, ինչը մրցակցային հավասար պայմաններ է ապահովել բոլոր մասնակիցների համար: Բացի այդ, հանրապետական սփռման մրցույթի մասնակիցներին նաև լիցենզիա ստանալու լրացուցիչ հնարավորություն է ընձեռնվել՝ հանրապետական սփռման մրցույթի հայտատուն ըստ ցանկության միաժամանակ մասնակցել է նաև մայրաքաղաքային սփռման մրցույթին՝ այդ մասին նշում կատարելով հայտում: Հանրապետական սփռման համար սահմանված սլոթների քանակն ավելի բարձր վարկանիշային միավորներ ստացած մասնակիցների կողմից զբաղեցված լինելու դեպքում՝ հանրապետական սփռման մրցույթի անցողիկ շեմը հաղթահարած տվյալ մասնակցի վարկանիշային միավորը համադրվել է մայրաքաղաքային սփռման մրցույթի մասնակիցների վարկանիշային

միավորների հետ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել առավելագույն վարկանիշային միավոր ստացած մասնակիցը:

Հարկ է նշել, որ տարիներ շարունակ մի շարք մարզեր զրկված են եղել մարզային տեսալսողական ծրագրեր դիտելու հնարավորությունից, և Հանձնաժողովը գոհունակությամբ արձանագրում է, որ հաշվետու տարվա ընթացքում՝ առաջին անգամ թվային մուլտիպլեքսը գործարկելուց հետո, ՀՀ բոլոր մարզերն ունեցել են մարզային հեռարձակողներ:

2021 թվականի ընթացքում նոր հաճախականությունների համար Հանձնաժողովի կողմից հայտարարվել են լսողական ծրագրերի հաճախականության օգտագործման լիցենզավորման 8 մրցույթ, որից 3-ը՝ Երևան քաղաքի, 5-ը՝ մեկ մարզի տարածքում: Հայտարարված լսողական ծրագրերի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթներից 5-ը կայացել է, իսկ ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի և Լոռու մարզերի տարածքում հայտարարված մրցույթները հայտեր չներկայացվելու հիմքով հայտարարվել են չկայացած, ընդ որում ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում մրցույթները հայտարարվել են 2 անգամ:

Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ Օրենքով նոր հնարավորություններ են ընձեռվել նաև լսողական մեդիածառայություն մատուցողների համար: Նախկին օրենսդրական կարգավորումներով մարզային լսողական ծրագրերի հեռարձակման համար կային որոշակի անտրամաբանական սահմանափակումներ (լիցենզիա կարող էր տրամադրվել միայն երկու մարզում), իսկ օրենսդրական փոփոխությունների արդյունքում լսողական ծրագրի հաճախականության օգտագործման մրցույթ հայտարարվում է մարզերում նոր հաճախականության առկայության դեպքում:

Կարևորում ենք այն փաստը, որ նոր հաճախականությունների առաջացման հիմքով 2021 թվականին լսողական ծրագրեր հեռարձակողներն ավելացել են, և հատկանշական է, որ հայտարարված լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթների արդյունքում ՀՀ Արարատի և Գեղարքունիքի մարզերում արդեն հեռարձակվում են լսողական ծրագրեր: Սակայն, պետք է արձանագրել նաև, որ որոշ մարզերում հաճախականությունների հետ կապված կան խնդիրներ՝ մասնավորապես, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերում ազատ հաճախականություններ չկան, իսկ մի քանի մարզերում (ՀՀ Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզեր) հայտարարված լսողական ծրագրի հաճախականության

օգտագործման լիցենզավորման մրցույթները չկայացած են հայտարարվել՝ հայտեր չներկայացվելու հիմքով:

Ամփոփելով հաշվետու տարում կայացած մրցույթների մասին տեղեկատվությունը, Հանձնաժողովը ամենայն պատասխանատվությամբ հայտարարում է, որ մրցույթների ամբողջ գործընթացը կազմակերպվել է պատշաճ, հայտ ներկայացրած ընկերությունների համար ապահովվել են հավասար պայմաններ, մրցույթի արդյունքների հիմքում եղել են օբյեկտիվ, անկողմնակալ գնահատականներ:

2021 թվականի լիցենզավորման ցուցանիշներ

Հանձնաժողովն անցկացված մրցույթների արդյունքում 2021 թվականին տրամադրել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման հանրապետական սփռման 5, մայրաքաղաքային սփռման 7, մարզային սփռման 10 լիցենզիա, իսկ լսողական ծրագրի հաճախականության օգտագործման Երևան քաղաքի տարածքում 3 և մեկ մարզի տարածքում 2 լիցենզիա:

2021 թվականին տրամադրված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիաներ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	21.01.2021թ.-21.01.2028թ.
2	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	21.01.2021թ.-21.01.2028թ.
3	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	21.01.2021թ.-21.01.2028թ.
4	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	21.01.2021թ.-21.01.2028թ.
5	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	21.01.2021թ.-21.01.2028թ.
6	«ՇԱՐԿ» ՍՊԸ	ք. Երևան	21.01.2021թ.-21.01.2028թ.
7	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ	ք. Երևան	21.01.2021թ.-21.01.2028թ.
8	«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Երևան	21.01.2021թ.-21.01.2028թ.
9	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	ք. Երևան	21.01.2021թ.-21.01.2028թ.

10	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	ք. Երևան	21.01.2021թ.-21.01.2028թ.
11	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	ք. Երևան	21.01.2021թ.-21.01.2028թ.
12	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
13	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
14	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
15	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
16	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
17	«ՑԱՅԳ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
18	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
19	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզ	21.01.2021թ.-21.01.2028թ.
20	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	ՀՀ Վայոց ձորի մարզ	21.05.2021թ.-21.05.2028թ.
21	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	28.05.2021թ.-28.05.2028թ.
22	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	ք. Երևան	08.06.2021թ.-08.06.2028թ.

2021 թվականին տրամադրված լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզիաներ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1	«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ	ք. Երևան	20.08.2021թ.-20.08.2028թ.
2	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	20.08.2021թ.-20.08.2028թ.
3	«ՀԻԲՐԻԴ ԲՐՈՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ	ք. Երևան	20.08.2021թ.-20.08.2028թ.
4	«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Երևան	27.08.2021թ.-27.08.2028թ.
5	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	14.12.2021թ.-14.12.2028թ.

2021 թվականին Հանձնաժողով է ներկայացվել ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու 11 դիմում, որոնք բավարարվել են: Արդյունքում տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 4 լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության, 2 լիցենզիա՝ Երևան քաղաքում և 5 լիցենզիա՝ մեկ մարզի տարածքում սփռման համար:

2021 թվականին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1	«ԱՐՏ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	06.02.2021թ.-06.02.2031թ.
2	ՄԱՆՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ՓԱՇԻԿՅԱՆ ԱՁ	ՀՀ Արագածոտնի մարզ	10.02.2021թ.-10.02.2031թ.
3	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	29.04.2021թ.-29.04.2031թ.
4	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	11.06.2021թ.-11.06.2031թ.
5	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	10.07.2021թ.-10.07.2031թ.
6	ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	22.07.2021թ.-22.07.2031թ.
7	«ԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	22.07.2021թ.-22.07.2031թ.
8	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	05.08.2021թ.-05.08.2031թ
9	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.09.2021թ.-24.09.2031թ
10	ՄԻՔԱՅԵԼ ՇՈԿԱՐՅԱՆ ԱՁ	Հայաստանի Հանրապետություն	28.09.2021թ.-28.09.2031թ.
11	«Է.Ֆ ՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	21.10.2021թ.-21.10.2031թ

Հաշվետու ժամանակահատվածում դադարեցվել է լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով եթերային հեռարձակման 21 և ցանցային օպերատորի գործունեության 14 լիցենզիա՝ ժամկետը լրանալու հիմքով կամ դիմումի համաձայն.

2021 թվականին եթերային հեռարձակման գործողությունը դադարեցված լիցենզիաներ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՈՒՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
1	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	ժամկետը լրանալու հիմքով
2	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ժամկետը լրանալու հիմքով
3	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ժամկետը լրանալու հիմքով
4	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	ժամկետը լրանալու հիմքով
5	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	ժամկետը լրանալու հիմքով
6	«ԱՆՄՎԵՐ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ժամկետը լրանալու հիմքով
7	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
8	«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
9	«ՄՌ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
10	«ՇԱՐԿ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
11	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
12	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
13	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
14	«ԱԴՎԵՐՏԱ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
15	«ՊԱՐԱԴԻՋ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
16	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	ժամկետը լրանալու հիմքով
17	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ժամկետը լրանալու հիմքով
18	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ժամկետը լրանալու հիմքով
19	«ՑԱՅԳ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	ժամկետը լրանալու հիմքով
20	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	ժամկետը լրանալու հիմքով
21	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզ	ժամկետը լրանալու հիմքով

2021 թվականին ցանցային օպերատորի գործունեությունը դադարեցված լիցենզիաներ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՈՒՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
1	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	դիմումի համաձայն
2	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
3	«ՌԱԶՆԵՏԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	դիմումի համաձայն
4	«ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան	դիմումի համաձայն
5	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	դիմումի համաձայն
6	«ՖԱՎՈՐԻՏ ԹԻ ՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան	դիմումի համաձայն
7	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	ժամկետը լրանալու հիմքով
8	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	ժամկետը լրանալու հիմքով
9	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	ժամկետը լրանալու հիմքով
10	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	դիմումի համաձայն
11	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի,Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր	դիմումի համաձայն
12	«ՏԵԼԵՌԱԴԻՈ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	դիմումի համաձայն
13	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	դիմումի համաձայն
14	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	դիմումի համաձայն

ԱՆԱԼՈԳԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԱՎԱՐՏԸ

2021 թվականը անալոգային հեռուստահեռարձակման վերջին տարին էր: Անալոգային տիրույթում գործող տեղական հեռուստաընկերությունների եթերային հեռարձակման լիցենզիաները դադարեցվել են օրենքի ուժով, և արդյունքում 2021 թվականից հեռարձակումն իրականացվում է ամբողջությամբ թվային ձևաչափով: Անալոգային հեռուստատեսություններից շատերը շարունակել են իրենց գործունեությունը ցանցային օպերատորների փաթեթներով, կամ համացանցում տեսալսողական ծառայություններ մատուցելով:

2021 թվականին անալոգային հեռարձակման գործողությունը դադարեցված լիցենզիաներ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
1	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր	ժամկետը լրանալու հիմքով
2	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր	ժամկետը լրանալու հիմքով
3	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ	ք. Վանաձոր	ժամկետը լրանալու հիմքով
4	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	ք. Վանաձոր	ժամկետը լրանալու հիմքով
5	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	ք. Ալավերդի	ժամկետը լրանալու հիմքով
6	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	ք. Ալավերդի	ժամկետը լրանալու հիմքով
7	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ	ք. Հրազդան	ժամկետը լրանալու հիմքով

10. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործընթաց

Օրենքով տեսալսողական մեդիայի ոլորտում հեղինակային կամ հարակից իրավունքերի պահպանության ապահովման իրավական կարգավորումների համաձայն՝ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները գործում են Հանձնաժողովի վերահսկողության ներքո: Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները Հայաստանի Հանրապետությունում գործում են օրենսդրության համաձայն Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործառույթի շրջանակում, ներկայացված ծանուցումների հիման վրա ուսումնասիրվել են տեսալսողական

ծրագրերի իրավատերերի հետ կնքված 59 պայմանագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր, որի արդյունքում հաստատվել են 81 տեսալսողական ծրագրերի վերաբերյալ 17 ծանուցում:

Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն

Օրենքով Հանձնաժողովին վերապահվել է առանց լիցենզավորման ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման նոր գործառույթ: Ոչ գծային տեսալսողական տեղեկատվություն հեռարձակողները գործունեություն իրականացնում են Հանձնաժողովի կողմից թույլտվություն ստանալուց հետո: Կարևորելով հեղինակային և հարակից իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավատերերի իրավունքների պաշտպանությունը՝ Հանձնաժողովը այս նոր գործառույթը սկսել է լիարժեք իրականացնել 2021 թվականի հոկտեմբերից: Կարգավորող մարմնի թիվ 160-Ա որոշմամբ սահմանվել է ոչ գծային Հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու ընթացակարգը:

Հանձնաժողովին Օրենքով վերապահված ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվության տրամադրման նոր գործառույթի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում 4 ընկերության տրամադրվել է թույլտվություն, որից հետո այդ ընկերությունների ոչ գծային գործառույթները գտնվում են Հանձնաժողովի մշտադիտարկման տիրույթում:

2021 թվականին տրամադրված ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություններ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ
1	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր
2	«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
3	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
4	«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն

11. ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթի շրջանակներում իրականացրել է 3960 օրերի դիտարկումներ, որից հանրապետական և մայրաքաղաքային սփռման ծրագրերի՝ 2772 օր և մարզային սփռման ծրագրերի՝ 1188 օր:

Ստորև ներկայացվում է Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման տվյալներն ըստ նախորդ տարիների.

Մշտադիտարկման տարեթիվը	2018	2019	2020	2021
Հանրապետական և մայրաքաղաքային սփռման ծրագրերի մշտադիտարկման օրեր	2170	1860	2135	2772
Մարզային սփռման ծրագրերի մշտադիտարկման օրեր	1860	780	797	1188

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը իրականացրել է Օրենքով սահմանված կարգով և պարբերականությամբ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկում՝ տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով:

Իրականացվել են նաև տեսալսողական ծրագրերի դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման աշխատանքներ, ինչպես նաև տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների հիման վրա

լիցենզավորված Հեռարձակողների գործունեության օրենսդրության պահանջներին համապատասխանության վերահսկման աշխատանքներ:

Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականցվում է ուղղակի դիտարկման, իսկ ցանցային օպերատորների դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ե՛վ ուղղակի, և՛ տեղում դիտարկումները Հանձնաժողովի կողմից իրականացվել են պլանավորված՝ ամբողջ տարվա համար Հեռարձակողների և ցանցային օպերատորների համար կազմված ժամանակացույցի հիման վրա, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, երբ որևէ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի գործունեության վերաբերյալ ստացվել է դիմում-բողոք:

2021 թվականին վերահսկողական գործառույթի շրջանակներում ՀՀ տարածքում իրականացվել է 14 գործուղում, որից 5-ը՝ Երևան քաղաքում, իսկ 9-ը մարզերում՝ 3–ը Կոտայքի, 2–ը Շիրակի, 2–ը Լոռու և մեկական Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում: Գործուղումների արդյունքում մշտադիտարկման կամ տեղում դիտարկման են ենթարկվել ավելի քան 30 Հեռարձակող և ցանցային օպերատոր:

Օրենքով սահմանված կարգով Հանրային հեռարձակողի կողմից եռամսյա կտրվածքով Հանձնաժողով են ներկայացվել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում Հանրային հեռարձակողն ապահովել է հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը:

Էթիկայի նորմերի պահպանման մշտադիտարկում

Օրենքով սահմանվել է նոր հասկացություն՝ էթիկայի կանոնագիր, որը հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթ է՝ սեփական էթիկական նորմերի վերաբերյալ:

Բոլոր լիցենզավորված Հեռարձակողները այսուհետ պարտավոր են ունենալ էթիկայի կանոնագիր, ավելին՝ այն ներկայացվում է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման, լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների հայտերին կից և լիցենզիա ստանալու դեպքում, ի թիվս այլնի, հանդիսանում է լիցենզիայի պայման: Հեռարձակողները պարտավոր են նաև սահմանել իրենց կողմից ընդունված էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, ինչը ենթադրում է, որ Հեռարձակողը պետք է մեխանիզմներ սահմանի էթիկայի կանոնների կիրառումն ապահովելու համար:

2021 թվականին լիցենզավորված Հեռարձակողները ընտրել են էթիկայի կանոնների կիրառման ապահովման հնարավոր տարբերակներից երկուսը՝ մի մասը ստորագրել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, իսկ մյուս մասը ընտրել է ներքին ինքնակարգավորման տարբերակը: Ներքին ինքնակարգավորման դեպքում Հեռարձակողները սահմանում են իրենց էթիկայի կանոնագիրը, դրա դրույթների ապահովման եղանակները և ստեղծում կամ նշանակում դրա համար պատասխանատու մարմին (ստորաբաժանում) կամ անձ (օմբուդսման):

Ինքնակարգավորման մոդելը կարևոր է, քանի որ այն՝

- պաշտպանում է խմբագրական անկախությունը,
- նվազեցնում է պետական միջամտությունը,
- նպաստում է Հեռարձակողի որակի և մասնագիտության հանդեպ վստահության բարձրացմանը,
- Հեռարձակողների հաշվետվողականության ցուցանիշ է,
- ապահովում է Հեռարձակողների հասանելիությունը հասարակությանը:

Սակայն, Հայաստանում Հեռարձակողների ինքնակարգավորման մեխանիզմը դեռ չի կայացել և ունի բազմաթիվ թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալը՝

- էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ բողոքների երկար քննությունը՝ Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի և ներքին պատասխանատու մարմնի (ստորաբաժանման) կամ անձի (օմբուդսմանի) կողմից,
- «պատժի» և արարքի անհամապատասխանությունը՝ Հեռարձակողները պատրաստ են իրենց եթերում հրապարակել համապատասխան որոշումը և շարունակել խախտել էթիկայի նորմերը,
- սեփական էթիկայի կանոնագրի դեպքում չեն բացառվում կողմնակալ մոտեցման հնարավորություններ,
- քաղաքան ուժերը, պետական հաստատությունները, հանրությունը անտարբեր են մասնագիտական էթիկայի բազմաթիվ խախտումների հանդեպ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը՝ նպաստելով Հեռարձակողների ինքնակարգավորման նախաձեռնության ամրապնդմանը, 2021 թվականին բազմիցս դիմել է էթիկայի կանոնների կիրառումն ապահովող մարմիններ՝

- «Շարկ» ՍՊ ընկերության էթիկայի հանձնաժողով կարգավորող մարմինը դիմել է 2 անգամ՝ մի դեպքում «Շարկ» ՍՊ ընկերության կողմից «5-րդ ալիք»

տեսալսողական ծրագրի մի շարք հաղորդումների ընթացքում հնչեցված արտահայտությունների վերաբերյալ, որոնց հետ կապված ընկերության էթիկայի հանձնաժողովը չի հայտնաբերել էթիկայի կանոնագրի դրույթներին հակասող արտահայտություններ, բացառությամբ ուղիղ եթերով հեռարձակված որոշ արտահայտությունների, ինչը, ըստ ընկերության, ուղիղ եթերի առանձնահատկություններով է պայմանավորված, և տեխնիկապես անհնար է եղել եթերի լիակատար վերահսկողությունը: Մյուս դեպքում՝ ընկերության կողմից եթեր հեռարձակված «Կարճ ասած» տեսալսողական հաղորդման ընթացքում հնչեցված արտահայտությունների և նշված ընկերության էթիկայի կանոնագրի դրույթների անհամապատասխանության հարցով: «Շարկ» ՍՊ ընկերության էթիկայի հանձնաժողովը որոշ ձևակերպումներ դիտարկել է որպես էթիկայի կանոնների խախտում, քանի որ դրանք հակասել են «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի էթիկայի կանոնագրի դրույթներին և չափորոշիչներին, հորդորել է հաղորդումը արտադրող ընկերությանը հատուկ ուշադրություն դարձնել մեկնաբանի կողմից օգտագործվող բառամթերքին և արտահայտչաձևերին՝ հետագայում նմանօրինակ խնդիրներից խուսափելու համար: «Շարկ» ՍՊ ընկերության էթիկայի հանձնաժողովի դիրքորոշման վերաբերյալ տեղեկատվությունը հեռարձակվել է նաև «Հայլուր» լրատվականի շրջանակներում:

- «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի էթիկայի նորմերի խախտման հետ կապված Հանձնաժողովը Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին ևս դիմել է 2 անգամ: Հարկ է նշել, որ ընկերությունը թեպետ միայն հեղինակազորված է և հեռարձակում իրականացնում է ցանցային օպերատորների միջոցով, սակայն ստորագրել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը: Արձանագրված հնարավոր խախտումներից առաջինը վերաբերել է «Հայելի ակումբ» տեսալսողական հաղորդումների ընթացքում հնչեցված արտահայտություններին, որի վերաբերյալ ներկայացնելով իր եզրակացությունը՝ Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմինը արձանագրել էր, որ լրագրողը հնարավորություն ունի և պարտավոր է զրուցակցի կողմից ատելության և ոչ էթիկական խոսք հնչելու դեպքում ընդհատել վերջինիս և նրան հնարավորինս բերել քաղաքավարության դաշտ: Իսկ հենց լրագրողի կամ լրատվամիջոցի կողմից նման բառապաշարի կիրառումը կամ խրախուսումը խստորեն հակասում է հայաստանյան լրագրողական էթիկայի կանոններին: Տեսագրված նյութը հեռարձակելուց առաջ ընկերությունը հնարավորություն ուներ մոնտաժելու այն, հարցազրույց տվողի մտքերը

ամբողջությամբ փոխանցելով, անհրաժեշտության դեպքում ներառելով հաղորդավարի խոսքը, հեռացնելով ոչ էթիկական արտահայտությունները: Իսկ երկրորդը վերաբերել է «Լրաբեր» տեսալսողական հաղորդման ընթացքում հնչեցված առանձին արտահայտությունների, որը 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս քննվում էր:

- «Ֆրի Նյուզ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Ֆրի Նյուզ» տեսալսողական ծրագրի «Ազատ լուրեր» տեսալսողական հաղորդման ընթացքում հեռարձակված ռեպորտաժների կապակցությամբ Հանձնաժողովը նույնպես դիմել է զանգվածային լրատվական միջոցների էթիկայի դիտորդ մարմին: Դիտորդ մարմինը, ներկայացնելով իր փորձագիտական կարծիքը, էթիկայի ակնհայտ խախտումներ չի արձանագրել, սակայն հորդորել է հեռարձակող լրատվամիջոցին հետևել սեփական եթերներին, հատկապես ուշադիր լինել ուղիղ ռեպորտաժների նկատմամբ, և դրանցում լրագրողի կողմից պրոֆեսիոնալ էթիկայի կանոնների խախտումների առկայության դեպքում ողջամտության սահմաններում միջոցներ ձեռնարկել, ընդհուպ ուղիղ հեռարձակումը ընդհատել և տեղի ունեցածի մասին լսարանին ծանոթացնել խմբագրված տեսանյութով:

Մինչև 2021 թվականի մայիսի 15-ը՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգում լրացում կատարելը՝ Հանձնաժողովը իրավասություն չի ունեցել դիմելու զանգվածային լրատվական միջոցների էթիկայի դիտորդ մարմին, այդ իսկ պատճառով դիմել է անմիջականորեն Հեռարձակողներին՝ էթիկայի նորմերի խախտման կապակցությամբ իրենց դիրքորոշումը ստանալու նպատակով՝

- «Մուլտի Մեդիա-Կենտրոն Թիվի» ՓԲ ընկերության «Կենտրոն» տեսալսողական ծրագրի հաղորդումներում հնչած արտահայտությունների վերաբերյալ, որոնք ընկերությունը ընդունել է որպես էթիկայի կանոնների խախտում:

- «Հուսաբեր» ՓԲ ընկերության «Երկիր Մեդիա» տեսալսողական ծրագրի հաղորդումների ընթացքում առանձնացված արտահայտությունների վերաբերյալ, որին ի պատասխան Հեռարձակողը նշել է, որ ուղիղ եթերներում տեղ գտած ոչ թույլատրելի արտահայտություններից խուսափելու համար որոշում է կայացվել հանրահավաքներն ուղիղ եթերում չհեռարձակել, այլ արձանագրել ու միայն խմբագրումից հետո հեռարձակել:

- «Արմնյուզ» ՓԲ ընկերության «Արմնյուզ» տեսալսողական ծրագրի հաղորդումների ընթացքում առանձնացված արտահայտությունների վերաբերյալ, որին ի պատասխան Հեռարձակողը հայտնել է, որ դրանք համարել է վերահեռարձակված, սեփական կամ ոչ սեփական արտադրության տարբեր

տեսալսողական հաղորդումների, ռեպորտաժների ընթացքում հնչած տարբեր անձանց տարբեր բնույթի արտահայտություններ:

Վերոնշյալ օրինակները ևս փաստում են, որ Հեռարձակողների ինքնակարգավորման մեխանիզմը Հայաստանի Հանրապետությունում դեռ չի կայացել, և էթիկայի նորմերի կիրառման ապահովման տեսանկյունից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ:

Ընտրությունների լուսաբանման մշտադիտարկում

Հանձնաժողովի դերը՝ որպես տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող անկախ սահմանադրական մարմին, ավելի քան կարևորվում է ընտրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների և ընտրողների համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը ապահովելու գործում:

2021 թվականը հագեցած տարի է եղել ընտրական գործընթացներով: Հանձնաժողովը յուրաքանչյուր ընտրության ժամանակ տեսալսողական ծրագրերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության մշտադիտարկումն իրականացրել է ներքոհիշյալ տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության հիման վրա՝

- տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքների,
- տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյաններում մուտքագրված տվյալների և Հեռարձակողներից ստացված տեղեկատվության,
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության,
- հեռարձակողների կողմից ՀՀ ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների,
- պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվության:

ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ

2021 թվականի հունիսի 20-ին նշանակված ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանները, քաղաքացիների (ընտրողների) համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը ապահովելու նպատակով Հանձնաժողովը ընդունել է հետևյալ իրավական ակտերը՝

- 2021 թվականի մայիսի 18-ի «ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 64-Ա որոշումը.
- 2021 թվականի մայիսի 27-ի «ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 68-Ա որոշումը:

2021 թվականի մայիսի 31-ին Հանձնաժողովը հանդես է եկել կոչով, որում դիմելով Հեռարձակող բոլոր ընկերություններին՝ հորդորել է, որ ստեղծված բարդ ու պատասխանատու ժամանակահատվածում նրանց գործունեությունը չառաջացնի նոր բաժանարար գծեր ու դառնա տարբեր քաղաքական ուժերի ու ֆինանսական խմբերի կցորդ, այլ նպաստի հանրային և քաղաքացիական համերաշխությանը: Հաշվի առնելով ստեղծված ճգնաժամային իրողությունները, Հանձնաժողովը կոչ է արել նախընտրական ժամանակահատվածում չառաջնորդվել սեփական համակրանքով ու հակակրանքով, այլ ապահովել բազմակարծությունը, օրենսդրությամբ սահմանված պատասխանի ու հերքման հնարավորությունները: Հանձնաժողովը դիմել է նաև ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին, պատգամավորության թեկնածուներին, նախընտրական շտաբերի աշխատակիցներին, ընտրական հանձնաժողովների անդամներին, դիտորդներին, իրավապահ մարմինների ներկայացուցիչներին՝ ապահովելու օպերատիվ կերպով ու ամբողջական ծավալով տեղեկատվություն ստանալու մատչելիությունը՝ հարգանքով վերաբերվելով լրագրողների ու լրատվամիջոցների գործունեությանը:

2021 թվականի հունիսի 1-ին, 2-ին և 3-ին Հանձնաժողովը կազմակերպել է սեմինար-դասընթացներ ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող

կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական շտաբերի ներկայացուցիչների և Հեռարձակողների ներկայացուցիչների համար: Սեմինար-դասընթացներին ներկայացվել են ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների ու նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև նախընտրական քարոզչությունը կարգավորող օրենսդրության պահանջները: Միաժամանակ ներկայացվել են նաև նախընտրական շրջանում Հեռարձակողների իրավունքները և պարտականությունները, ուղիղ եթերով ցուցադրվող հաղորդումների ժամանակ էթիկայի կանոնների չպահպանման հետևանքով օրենսդրությամբ առաջացող և կիրառվող պատժամիջոցները:

ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի և դրա սակագնի վերաբերյալ մինչև 2021 թվականի մայիսի 21-ը հայտարարություն են տարածել նաև տարբեր սփռում ունեցող 36 Հեռարձակողներ, որից հանրապետական սփռում ունեցող 6 տեսալսողական և 4 լսողական, մայրաքաղաքային սփռում ունեցող 5 տեսալսողական և 7 լսողական ծրագիր Հեռարձակողներ, մարզերում ցանցային օպերատորների միջոցով հեռարձակում իրականացնող 5 Հեռարձակող, մարզային սփռում ունեցող 7 տեսալսողական և 2 լսողական ծրագիր Հեռարձակող:

Հանձնաժողովը հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի եթերից օգտվելու հնարավորությունն ավելի մատչելի դարձնելու նպատակով, հանրային հեռուստաընկերության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանել է 45 000 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), ի տարբերություն ՀՀ Ազգային ժողովի 2018 և 2017 թվականների ընտրությունների, որոնց ընթացքում այն սահմանվել էր համապատասխանաբար՝ 48 000 և 60 000 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ): Իսկ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվել է 1800 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), ի տարբերություն նախորդ երկու ընտրությունների, երբ այն սահմանվել էր 2000 դրամ (ներառյալ ՝ ԱԱՀ):

2021 թվականի հունիսի 7-ից մինչև հունիս 20-ը ներառյալ Հանձնաժողովն իրականացրել է ՀՀ տարածքում գործող Հեռարձակողների՝ ՀՀ ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է տեսալսողական ծրագրերի վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Հեռարձակողները ըստ սահմանված կարգի 2021 թվականի հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Հանձնաժողով տեղեկատվություն են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված հաղորդումների մասին: Ստացված տեղեկատվությունը տվյալներ է պարունակել յուրաքանչյուր ընկերության կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի, նրանց և(կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության, ինչպես նաև լրատվական ծրագրերում նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության վերաբերյալ:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի ուղղակի դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի կողմից կազմված տեղեկանքում, որն օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ 2021 թվականի հունիսի 16-ին, հրապարակվել է Հանձնաժողովի կայքում, և նշված ժամկետում ներկայացվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով: Հայաստանի Հանրապետությունում գործող գրեթե բոլոր Հեռարձակողները մասնակցել են նախընտրական քարոզչությանը: Վերլուծությունը ցույց է տվել, որ քարոզչությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին ամենաշատ եթերաժամանակը տրամադրվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից: Նախընտրական քարոզչության մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Մի քանի լրատվամիջոցներ կազմակերպել են բանավեճեր, այդ թվում՝ հանրային Հեռարձակողը, որի եթերում եղել է չորս բանավեճ: Սակայն մի քանի կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ղեկավարներ հրաժարվել են մասնակցել հանրային Հեռարձակողի կողմից կազմակերպված երկու ամփոփիչ բանավեճին: Անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ ՀՀ քաղաքական կյանքում խիստ կարևոր էր Հայաստանի հանրային Հեռարձակողի կողմից կազմակերպված և բավականին հաջողված ձևով իրականացված քաղաքական բանավեճը՝ 2021 թվականի հունիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների, ընտրացուցակների առաջին համարներում ներկայացված անձանց, ինչպես նաև, այդ ցուցակների առաջին տասնյակը ներկայացնող թեկնածուների միջև:

Օրենքով սահմանված ժամանակահատվածում, Հանձնաժողովի կողմից ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար տեսալսողական ծառայություն մատուցողների նկատմամբ հարուցվել են վարչական

վարույթներ՝ նախընտրական քարոզչական տեսալսողական հաղորդումները առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական քարոզչություն» լուսագրի ուղեկցության, իսկ լսողական հաղորդումների դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ չհիշեցման հիմքով, ինչպես նաև ընտրություններին օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ հեռարձակելու հիմքով: Իսկ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրերում՝ օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակման հիմքով կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ուղարկվել է Հանրային հեռարձակողի խորհուրդ:

Վերոնշյալ ընտրություններով պայմանավորված Հանձնաժողովը ստացել է հետևյալ գրությունները՝

ՀՀ քաղաքացի Վիլեն Գայֆեջյանից, առ այն, որ մի քանի հեռուստաընկերություններ հեռարձակել են տեսահոլովակ, որը ստացվել է իրեն հեղինակային իրավունքով պատկանող ճիշտ անվամբ ֆեյսբուք սոցիալական ցանցի էջում հրապարակված տեսալսողական ստեղծագործության վերափոխման (մոնտաժման) արդյունքում: Նույն հարցի շուրջ, սակայն, Հեռարձակողի տեսանկյունից գրություններ են ներկայացրել՝ «Արմենիա Թի-Վի» ՓԲ, «Արմնյուզ» ՓԲ, «Ա-Թիվի» ՍՊ և «Ձագեձոր» հեռուստաընկերություն ՍՊ ընկերությունները:

Հանձնաժողովը ստացել է «Հայաստան» և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի և «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության գրությունները՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերում լրագրողի կողմից անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն չապահովելու մասին:

Գրություն է ստացվել նաև «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կողմից՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության տեսահոլովակները հեռարձակելու վերաբերյալ, որոնք ակնհայտորեն ունեն վիրավորական, զրպարտչական, այլ անձանց իրավունքները խախտող, ատելության խոսք տարածող կամ այլ՝ բարեվարքության ակնհայտ կանոններին հակասող բնույթ: Նույն հարցի շուրջ գրություն է ստացվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից:

Հանձնաժողովը վերոնշյալ գրություններին, օրենքով սահմանված կարգով, պատասխանել է՝ հայտնելով իր դիրքորոշումը: Հանձնաժողովի պատասխանների վերաբերյալ դիմող կողմերը որեւէ առարկություն չեն ունեցել:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ընտրություններ

2021 թվականի հոկտեմբերի 17-ին նշանակվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական ընտրությունները:

Հանձնաժողովը 2021 թվականի օգոստոսի 24-ի թիվ 139-Ա որոշմամբ սահմանել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության մասնակից կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին՝ հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը, իսկ 2021 թ. օգոստոսի 25-ի թիվ 140-Ա որոշմամբ հաստատել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:

Այս ընտրությունների ժամանակ առաջին անգամ կիրառվել է ընտրական օրենսդրության նոր դրույթը, համաձայն որի՝ մարզկենտրոնների ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ տվյալ մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 20 րոպե:

Տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի և դրա սակագնի վերաբերյալ մինչև 2021 թվականի սեպտեմբերի 21-ը հայտարարություն են տարածել նաև տարբեր սփռում ունեցող Հեռարձակողներ, մասնավորապես՝

- հանրապետական սփռում ունեցող 3 տեսալսողական և 2 լսողական ծրագիր Հեռարձակողներ,

- մայրաքաղաքային սփռում ունեցող 2 տեսալսողական ծրագիր Հեռարձակող,

- ՀՀ Շիրակի մարզում ցանցային օպերատորների միջոցով հեռարձակում իրականացնող 1 Հեռարձակող,

- մարզային սփռում ունեցող 3 տեսալսողական և 1 լսողական ծրագիր Հեռարձակողներ:

Հանձնաժողովը, հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոյի եթերներից օգտվելու հնարավորությունն ավելի մատչելի դարձնելու նպատակով, հանրային հեռուստաընկերության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանել է 40 000 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), իսկ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվել է 1500 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ):

Հանձնաժողովն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում 2021 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ իրականացրել է Հեռարձակողների գործունեության՝ ՀՀ ընտրական օրենսդրության և Օրենքի պահանջների համապատասխանության վերահսկողություն:

Հեռարձակողներն ըստ սահմանված կարգի 2021 թվականի հոկտեմբերի 17-ի ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում հեռարձակված հաղորդումների մասին տեղեկատվություն են ներկայացրել Հանձնաժողով, ներառյալ՝ ընտրությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրած անվճար և վճարովի կարգով եթերաժամանակի, նրանց և(կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության, լրատվական հաղորդումներում նրանց նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության մասին:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացրած ուղղակի դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի կողմից կազմված տեղեկանքում, որն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 10-ին հրապարակվել են Հանձնաժողովի կայքում, ներկայացվել՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական ընտրություններին վերաբերող պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից և քաղաքացիներից դիմում-բողոքներ չեն ստացվել:

Նշված ընտրություններում կիրառվել է օրենսդրության ևս մեկ նոր դրույթ, այն է՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն 70 000-ից ավելի ընտրող

ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է առնվազն մեկ բանավեճ՝ ապահովելով ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մասնակցության հավասար պայմաններ: Նախընտրական բանավեճի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 րոպե: Հայաստանի հանրային հեռուստաընկերության նախընտրական բանավեճը կազմակերպվել և հեռարձակվել է հոկտեմբերի 15-ին, 22:00-23:35 ընկած ժամանակահատվածում, ընդ որում հաղորդման ժամանակ ապահովվել է ժեստերի լեզվով թարգմանությունը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ կարևոր ձևաչափ էր ընտրությունների նախընտրական քարոզչության փուլում ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրացուցակների առաջին համարներում ներկայացված անձանց կամ ցուցակների առաջին տասնյակը ներկայացնող թեկնածուների միջև քաղաքական բանավեճով վերջիններիս դիրքորոշումները ներկայացնելը հանրային հեռարձակողի ուղիղ եթերում:

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու ընտրություններ

2021 թվականի դեկտեմբերի 5-ին նշանակվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու հերթական ընտրությունները:

Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 155-Ա որոշմամբ հաստատել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության մասնակից կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը, համաձայն որի հանրային հեռուստաընկերության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանել է 40 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), իսկ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը՝ 1500 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ):

2021 թվականի հոկտեմբերի 13-ին Հանձնաժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների,

կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 156-Ա որոշումը:

Ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի և դրա սակագնի վերաբերյալ մինչև 2021 թվականի հոկտեմբերի 10-ը հայտարարություն են տարածել նաև տարբեր սփռում ունեցող Հեռարձակողներ, մասնավորապես՝

- հանրապետական սփռում ունեցող 2 տեսալսողական և 1 լսողական ծրագիր Հեռարձակողներ,
- ՀՀ Լոռու մարզում ցանցային օպերատորների միջոցով հեռարձակում իրականացնող 1 Հեռարձակող,
- մարզային սփռում ունեցող 1 Հեռարձակող և 1 լսողական ծրագիր Հեռարձակող:

Հանձնաժողովն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում 2021 թվականի նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը ներառյալ իրականացրել է Հեռարձակողների գործունեության՝ ՀՀ ընտրական օրենսդրության և Օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հեռարձակողներն ըստ սահմանված կարգի 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում հեռարձակված հաղորդումների մասին տեղեկատվություն են ներկայացրել Հանձնաժողով, ներառյալ՝ ընտրությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրած՝ անվճար և վճարովի կարգով եթերաժամանակի, նրանց և(կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության, լրատվական ծրագրերում նրանց նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության մասին:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացրած ուղղակի դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի կողմից կազմված տեղեկանքում, որն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ին և 29-ին հրապարակվել են Հանձնաժողովի կայքում, նշված ժամկետներում ներկայացվել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Այս ընտրություններին վերաբերող պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից և քաղաքացիներից դիմում-բողոքներ չեն ստացվել:

Նշված ընտրություններում ևս կիրառվել է ընտրական օրենսդրության նոր դրույթը, համաձայն որի 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու

ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է առնվազն մեկ բանավեճ՝ ապահովելով ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մասնակցության հավասար պայմաններ: Նախընտրական բանավեճի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 րոպե: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախընտրական բանավեճը կազմակերպել և հեռարձակել է դեկտեմբերի 2-ին, ժամը 22:10-00:00, ընդ որում հաղորդման ժամանակ ապահովվել է ժեստերի լեզվով թարգմանությունը:

Հատկանշական է նաև , որ ՀՀ Լոռու մարզի տարածքում սփռում իրականացնող Հեռարձակողը նույնպես նախընտրական բանավեճ է կազմակերպել «ուղիղ եթեր» ձևաչափով, նախընտրական քարոզչությանը մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ցուցակներում գրանցված առաջին համարի թեկնածուների հետ, որը հեռարձակվել է նոյեմբերի 25-ին, ժամը 20:30-22:30:

12. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթներ

Հանձնաժողովը իրականացնելով Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորությունները՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վարչարարության իրականացման արդյունքում 2021 թվականի ընթացքում արձանագրում է վարչական վարույթների քանակի աննախադեպ աճ, որի պատճառներին և վերլուծությանը կանդրադառնանք ստորև:

Հանձնաժողովի կողմից 2021 թվականի ընթացքում հարուցվել է 85 վարչական վարույթ, որից 70-ը՝ սեփական նախաձեռնությամբ, իսկ 15-ը՝ անձանց դիմումների, բողոքների համաձայն:

- Սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների պարագայում՝
    - 44 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է վարչական տույժ՝ տուգանք,
    - 8 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է վարչական տույժ՝ նախազգուշացում,
    - 15 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթները կարճվել են,

- 3 վարչական վարույթ 2021 թվականին դեռևս չէր ավարտվել:

- Անձանց դիմումների, բողոքների համաձայն հարուցված վարչական վարույթների պարագայում՝
  - 4 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է վարչական տույժ՝ տուգանք,
  - 7 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է վարչական տույժ՝ նախազգուշացում,
  - 3 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթները կարճվել են,

  - 1 վարչական վարույթ 2021 թվականին դեռևս չէր ավարտվել:

Հանձնաժողովի կողմից վարչարարության արդյունքում կիրառվել է 63 վարչական տույժ, ընդ որում մի քանի ընկերությունների հանդեպ կիրառվել են մեկից ավելի վարչական տույժեր:

2019, 2020 և 2021 թվականներին իրականացված վարչական վարույթների համեմատական վերլուծությունից գալիս ենք հետևյալ եզրահանգման՝

- 2019 թվականին անձանց դիմումների, բողոքների համաձայն հարուցված վարույթների քանակը 4-ն էր, իսկ Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվածը՝ 18-ը: 2020 թվականին անձանց դիմումների, բողոքների համաձայն հարուցված վարույթների քանակը՝ 9-ն էր, իսկ Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվածը՝ 8-ը, իսկ 2021 թվականին համապատասխանաբար՝ 15 և 70:

Նշենք, որ 2011-2018 թթ. իրականացված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժ է կիրառվել ընդամենը 15 ընկերության նկատմամբ:

Ստորև ներկայացնենք 2011-2018, 2019, 2020 և 2021 թվականներին հարուցված վարչական վարույթների համեմատական պատկերը.



Իսկ ահա այսպիսինն է 2019, 2020 և 2021 թվականներին իրականացված վարչական վարույթների արդյունքում Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համեմատական պատկերը.



Հանձնաժողովը մեծ ուշադրություն է դարձնում Հեռարձակողների և ցանցային օպերատորների կողմից հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենսդրության պահանջների պահպանմանը, և եթե 2020 թ. հարուցվել էր 2 վարչական վարույթ, ապա 2021 թ. ընթացքում այս իրավախախտման հիմքով հարուցվել է 27 վարչական վարույթ, որի արդյուքում 3 Հեռարձակողի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ նախազգուշացում, իսկ 17 ցանցային օպերատորի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ տուգանք, իսկ 7 վարչական վարույթ կարճվել է:

Հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից գովազդը կարգավորող դրույթների նկատմամբ: Հանձաժողովը խիստ կարևոր է համարում այն հանգամանքը, որ թունդ ալկոհոլային խմիչքների և/կամ ծխախոտի գովազդի հեռարձակումն ըստ էության կապված է հանրային շահի հետ, ինչպես նաև ներառում է իր մեջ հանրության առողջության պահպանումը: Կարգավորող մարմինը, հիմք ընդունելով նշված հանգամանքը, երկու Հեռարձակողի նկատմամբ կիրառել է վարչական տույժ՝ տուգանք, իսկ երկու վարչական վարույթ 2021 թ. ընթացքում դեռևս չէր ավարտվել: «Գովազդի մասին» օրենքով ամրագրված վիճակախաղի կամ շահումով խաղերի գովազդային հոլովակների հեռարձակման սահմանափակումները խախտելու հիմքով Հանձնաժողովի կողմից հարուցվել է ևս 3 վարչական վարույթ, որի արդյունքում 2 Հեռարձակողի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ տուգանք, իսկ մեկ վարչական վարույթ կարճվել է:

Վարչական վարույթների քանակի աճը պայմանավորված է նաև տեսալսողական մեդիայի օրենսդրության փոփոխության և օրենսդրությամբ նոր պահանջների ի հայտ գալու հետ: Չնայած Հաձնաժողովի կողմից անցկացված դասընթաց-սեմինարների ընթացքում հանգամանալիորեն ներկայացվել են օրենսդրության փոփոխությունները և այդ փոփոխությունների արդյունքում օրենսդրական նոր պահանջների կատարման անհրաժեշտությունը, սակայն արդյունքում Հեռարձակողների և ցանցային օպերատորների կողմից չեն կատարվել մի քանի օրենսդրական պահանջներ:

Մասնավորապես, Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն էր սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը Հանձնաժողով ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն և Հանձնաժողովը հաշվի առնելով, որ Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին և տեսալսողական մեդիայի ոլորտում սահմանվել են նոր կարգավորումներ, ուստի, գրություններով Հեռարձակողների և օպերատորներին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ դրույթի մասին և առաջարկել է Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն: Չնայած Հանձնաժողովի կողմից տարված աշխատանքներին, արդյունքում Հանձնաժողովի կողմից հարուցվել է 25 վարչական վարույթ, որոնց արդյունքում՝ 21 ընկերության նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ տուգանք, իսկ 4 վարչական վարույթ՝ կարճվել:

Օրենքով տեսալսողական մեդիածառայություն մատուցողների տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող նոր պահանջներից է նաև

լիցենզիա ստացած Հեռարձակողների ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահպանումը, և այս համատեքստում կատարելով օրենքի պահանջը, ինչպես նաև կարևորելով այն հանգամանքը, որ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից սպառողին պետք է ներկայացվեն նաև մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածություն ունեցող տեսալսողական հաղորդումներ, Հանձնաժողովն այն չպահպանելու հիմքով 4 Հեռարձակողի նկատմամաբ կիրառել է վարչական տույժ՝ տուգանք:

Իրականացված վարչական վարույթների մեծ քանակը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հաշվետու տարվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով Հանձնաժողովը կատարել է իր կարգավորող և վերահսկողական գործառույթները ՀՀ Ազգային ժողովի արտահերթ և 70 000-ից ավելի ընտրող ունեցող մի քանի համայնքների ավագանու ընտրությունների ընթացքում, որոնց արդյունքում հարուցել է 9 վարչական վարույթ: Իրականացված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժ կիրառվել է 8 ընկերության նկատմամբ (մեկ տուգանք նշանակվել է, 7 նախազգուշացում) իսկ 1 վարչական վարույթ կարճվել է:

Վարչական վարույթներ հարուցվել և տուգանվել են 2 ընկերություն՝ առնվազն մեկական մանկական և (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով չհեռարձակելու, գրավոր նախազգուշացվել են երկու Հեռարձակող՝ տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում անփոփոխ չհեռարձակելու հիմքով, տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման կարգը և իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները չպահպանելու հիմքով 1 Հեռարձակող տուգանվել, իսկ 2 վարչական վարույթ կարճվել է, 1 Հեռարձակողի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ տուգանք՝ հայտին կցված փաստաթղթով Հեռարձակողի լիցենզիոն պայմանը խախտելու հիմքով, և 1 ընկերություն տուգանվել է՝ տեսալսողական ծրագրերի փոփոխության մասին Հանձնաժողովին չտեղեկացնելու հիմքով: Հարուցված ևս չորս վարույթ կարճվել է:

Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական բողոքարկումների վերաբերյալ

Հանձնաժողովը հաշվետու տարում գրանցել է նաև Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման մեծ աճ: 2021 թվականի ընթացքում 6 վարչական գործ գտնվել է դատարանների վարույթներում (սկսած 2001 թվականից՝ մեկ տարում այդքան հայց Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների հանդեպ չեն ներկայացվել):

Կարգավորող մարմնի ստեղծումից ի վեր քաղաքացիական հասարակության մտահոգության գլխավոր առարկան, Հանձնաժողովի իրական անկախությունը, հաշվետվողականությունը, գործունեության թափանցիկությունն է: Որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ չնայած Հանձնաժողովի օրենսդրորեն ամրագրված ինստիտուցիոնալ անկախությանը՝ մինչև 2018 թվականը այն գտնվել է իշխանության վերին օղակների ոչ բացահայտ հսկողության ներքո, և քաղաքական առանցքային որոշումներն ընդունվել են կարգավորող մարմնից դուրս: Այդ էր պատճառը, որ կարգավորող մարմնի և հեռարձակողների միջև ծագած խնդիրները լուծվում էին ոչ թե իրավական ճանապարհով, այլ տարատեսակ միջամտություններով և հրահանգներով: Հաշվետու տարում՝ հատկապես մրցութային գործընթացների ժամանակահատվածում, Հանձնաժողովի կողմից Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի արդյունքում ընդունված որոշումների դեմ ներկայացված հայցերը ևս մեկ ապացույց են այն իրողության, որ Հեռարձակողները ազատորեն օգտվում են Հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրենց իրավունքից:

Բերենք Հանձնաժողովի որոշումների դատական կարգով բողոքարկման 2011-ից 2021թթ. տվյալները.



Հանձնաժողովի կողմից դեռևս 2019 թվականին 3 տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերության (2 տեսալսողական և 1 լսողական) նկատմամբ ընդունված 4 վարչական ակտերը անվավեր ճանաչելու պահանջով հայցերը գտնվում էին դատարանների վարույթներում, և միայն 2021 թվականին են կայացվել հետևյալ վերջնական դատական ակտերը՝ 1 տեսալսողական մեդիածառայություն մատուցողի թվով 2 հայցերը բավարարվել են, 1 տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կողմից հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճվել է, իսկ 1 լսողական մեդիածառայություն մատուցողի հայցը մերժվել է:

Դատարանի վարույթում են գտնվում դեռևս 2020 թվականի Հանձնաժողովի ընդունած վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով 2 տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների (1 տեսալսողական և 1 լսողական) կողմից ներկայացված հայցերը, որոնք միացվել են մեկ վարույթում:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների արդյունքում ընկերությունները դիմել են դատարան, թվով 6 վարչական գործեր գտնվում են դատարանների վարույթներում, իսկ վերջնական դատական ակտեր 2021 թվականին չեն կայացվել: Վարչական գործերի թվում են՝

- 2021 թվականին հայտարարված Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի արդյունքում ընդունված որոշումն անվավեր ճանաչելու և բարենպաստ վարչական ակտերի ընդունելուն պարտավորեցնելու պահանջներով 1 հեղինակազորված ընկերություն,

- 2021 թվականին հայտարարված Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի արդյունքում ընդունված որոշումն անվավեր ճանաչելու և բարենպաստ վարչական ակտեր ընդունելուն պարտավորեցնելու պահանջներով 1 հեղինակազորված ընկերություն,

- 2021 թվականին հայտարարված Լսողական ծրագրի 99.7 ՄՀց հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի արդյունքում ընդունված որոշումն անվավեր ճանաչելու պահանջով 1 հեղինակազորված ընկերություն,

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտը՝ վարչական տույժ կիրառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջով 1 հեղինակազորված ընկերություն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշման՝ «Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործի քննության ժամանակ Հանձնաժողովը ներգրավվել է որպես հարակից պատասխանող: Հանձնաժողովը նշված գործով ներկայացրել է ամփոփ տեղեկանք՝ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման հարցի առնչությամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տեսալսողական ծառայություն մատուցողների նկատմամբ հարուցված վարչական վարույթների և դրանց արդյունքներով ընդունված որոշումների վերաբերյալ և ապահովել է իր ներկայությունը Սահմանադրական դատարանում:

13. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները 2021 թվականին պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջե մուտքագրված 33 946 820 ՀՀ դրամ գումարը ապահովել են տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման, ցանցային օպերատորների գործունեության համար տարեկան պետական տուրքերի, հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման, լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների մասնակցության, ինչպես նաև սահմանված ժամկետում չվճարված տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի համար գանձված գումարների հաշվին:

Համեմատական կարգով նշենք, որ Հանձնաժողովի կողմից գանձվող պետական տուրքը 2019 թվականին կազմել է 29 685 980 ՀՀ դրամ, 2020 թվականին՝ 38 532 690 ՀՀ դրամ: 2020 թվականի պետական տուրքի մուտքերի բարձր ցուցանիշը 2019 թվականի, ինչպես նաև 2021 թվականի մուտքերի նկատմամբ պայմանավորված է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մեծ թվով մրցույթների անցկացմամբ:

2021 թվականին իրավախախտումների համար կիրառված տուգանքներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է 6 886 206 ՀՀ դրամ, իսկ 2020

թվականին՝ 2 000 000 ՀՀ դրամ: 2021 թվականին իրավախախտումների համար կիրառված տուգանքների ավելացման պատճառը 2020 թվականի համեմատությամբ պայմանավորված է օրենսդրական փոփոխությամբ և տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և ցանցային օպերատորների կողմից տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտումների թվի ավելացմամբ, ինչպես նաև Հանձնաժողովի որոշումների բողոքարկման արդյունքում դատական ակտերի կայացմամբ:

14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովն երկկողմանի և բազմակողմանի ձևաչափով շարունակել է համագործակցել մի շարք երկրների մեդիակարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների ու հարթակների հետ՝ ուսումնասիրելով ոլորտի օրենսդրության և կարգավորման եղանակների առաջատար փորձը, կիրառման մեխանիզմները և այլն: Չնայած կորոնավիրուսային համավարակով (COVID-19) և դրա տարածման հետևանքներով պայմանավորված որոշ սահմանափակումների, Հանձնաժողովը մեծ արդյունավետությամբ փոխգործակցել է արտերկրի մի շարք գործընկերների հետ:

Հանձնաժողովը հանդիսանում է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) և Կենտրոնական Եվրոպայի կարգավորող ֆորումի (CERF) անդամ: 2021 թվականին Հանձնաժողովը հեռավար կարգով մասնակցել է EPRA-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին, որոնց ընթացքում քննարկվել են «Մեդիագրագիտություն» և «Ապատեղեկատվություն» թեմաները, մինչդեռ BRAF-ի, CERF-ի համաժողովները 2021 թվականի համար չեղարկվել են: Հանձնաժողովը նաև մասնակցել է Լոնդոնի միջազգային ինստիտուտի (IIC) կազմակերպած «Օնլայն կոնտենտի վերահսկում» թեմայով հեռավար եղանակով անցկացված կոնֆերանսին:

Դեռևս 2020 թվականին Հանձնաժողովը բանակցություններ էր սկսել Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի (MNRA) ղեկավար մարմնի հետ՝ այդ կազմակերպության անդամ դառնալու նպատակով: Հարթակի անդամ-երկրների ձայների մեծամասնությամբ 2021 թվականի նոյեմբերից Հանձնաժողովը պաշտոնապես ընգրկվել է MNRA և որպես լիիրավ անդամ հեռավար եղանակով մասնակցել է հարթակի առաջին հանդիպմանը:

2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկման նպատակով Հայաստան էին ժամանել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության պատվիրակության փորձագետները, որոնք հանդիպումներ ունեցան նաև Հանձնաժողովի նախագահի հետ: Հանդիպումից հետո Հանձնաժողովը սկսեց բանակցություններ վարել Մեդիա կարգավորող մարմինների ֆրանկոֆոն հարթակին (REFRAM) միանալու նպատակով, որի անդամության քվեարկությունը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերին:

Հանձնաժողովը կնքված երկկողմանի Հուշագրերի և պայմանագրերի հիման վրա մինչև 2021 թվականը փոխգործակցում էր երեք երկրների (Իտալիա, Չեխիա, Մոլդովա) կարգավորող մարմինների հետ: Նախորդ տարվա մայիսին Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և զանգվածային հաղորդակցության բնագավառի վերահսկողության դաշնային ծառայության (Ռոսկոմնադզոր) հրավերով Հանձնաժողովի նախագահը պաշտոնական այցով գտնվել է Մոսկվայում, աշխատանքային հանդիպումներ ունեցել Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարության և Ռոսկոմնադզորի ղեկավար կազմի, ինչպես նաև Հայաստանի թվային տիրույթում հեռարձակվող ռուսաստանյան հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում ՀՀ և ՌԴ-ի միջև կնքված զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին միջկառավարական Համաձայնագրի մի շարք դրույթների պրակտիկ իրագործման հետ կապված: Այցի ընթացքում Հայկական կողմի առաջարկությամբ կարգավորող երկու մարմինների միջև ստորագրվել է տեսալսողական մեդիայի ոլորտում համագործակցության մասին Հուշագիր:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 8-րդ նիստի շրջանակներում (ք. Երևան, սեպտեմբեր)՝ Հանձնաժողովի և Ուկրաինայի հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման ազգային խորհրդի (ՀՌՀԱԽ) միջև ևս ստորագրվել է Հուշագիր՝ հեռարձակման կարգավորման ոլորտում համագործակցության մասին: Հանձնաժողովի և ՀՌՀԱԽ-ի միջև ստորագրված հուշագիրը լայն հնարավորություններ է ստեղծելու երկու երկրների միջև համագործակցության, հատկապես՝ տեսալսողական ծրագրերի փոխանակման և տեսալսողական արտադրանքի ստեղծման, տեսալսողական մեդիադաշտի օրենսդրական կարևոր խնդիրների վերաբերյալ փորձի փոխանակման համար:

2021 թվականին Բելառուսի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ տեսալսողական ոլորտում համագործակցության մասին ևս

երկու հուշագիր պատրաստ էին ստորագրման, սակայն կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված իրավիճակը թույլ չտվեց ստորագրել նշված փաստաթղթերը: Համաձայնություն է ձեռք բերվել հուշագրերը ընթացիկ տարում ստորագրելու համար:

Աշխատանքներ են տարվել և ընթացքի մեջ է Լիտվայի Հանրապետության ռադիոյի և հեռուստատեսության հանձնաժողովի հետ նոր հուշագրի տեքստի մշակումը:

15. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Տեղեկատվություն հանձնաժողովի նիստերի եվ ընդունված Իրավական ակտերի վերաբերյալ

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: 2021 թվականի ընթացքում կարգավորող մարմինը գումարել է 55 նիստ, ընդունել 205 որոշում՝ 199 անհատական և 6 ներքին:

Ստորև ներկայացված է 2019, 2020 և 2021 թվականներին Հանձնաժողովի կողմից գումարած նիստերի և ընդունած որոշումների տվյալները.

		2019	2020	2021
ՆԻՍՏԵՐ		34	42	55
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ	ՆՈՐՄԱՏԻՎ	2	5	-
	ՆԵՐՔԻՆ	-	-	6
	ԱՆՀԱՏԱԿԱՆ	155	151	199

Օրենքի ընդունումից հետո օրենքով Հանձնաժողովին վերապահվել է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական, անհատական և ներքին ակտերի սահմանում: Հաշվետու տարում Հանձնաժողովը հետամուտ է եղել օրենքների դրույթների կիրարկման ապահովման նպատակով ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման և իր կողմից ընդունված գործող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման աշխատանքներին:

Հաշվետու տարում Հանձնաժողովը սահմանել է հետևյալ իրավական ակտերը.

- «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 32-Լ որոշում,
- «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 43-Լ որոշում,
- «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանելու մասին» թիվ 64-Ա որոշում,
- «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 68-Ա որոշում,
- «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշում,
- «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 110-Ա որոշում,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 17-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը սահմանելու մասին» թիվ 139-Ա որոշում,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 17-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական

մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 140-Ա որոշում,

- «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը սահմանելու մասին» թիվ 155-Ա որոշում,
- «Հայաստանի Հանրապետության 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 156-Ա որոշում,
- «Ոչ գծային հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին» թիվ 160-Ա որոշում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու տարում Հանձնաժողով մուտքագրվել է 3025 գրություն, քաղաքացիներից և կազմակերպություններից 96 դիմում-բողոք (մասնավորապես տեսալսողական հաղորդումների անորակ լինելու, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու, վարչական վարույթ հարուցելու, հեղինակային իրավունքի խախտման մասին), որոնց տրվել է պատասխան համաձայն գործող օրենսդրական ակտերի:

Ստորև ներկայացված է 2019, 2020 և 2021 թվականներին Հանձնաժողով մուտքագրված և ելքագրված գրությունների, այդ թվում դիմում-բողոքների տվյալները:

ՄՈՒՏՔԱԳՐՎԵԼ Է ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ	2019	2020	2021
ԳՐՈՒԹՅՈՒՆ	667	463	**3025**
ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ	**40**	**59**	**96**

Համեմատական վերլուծությունից երևում է, որ 2021 թվականին գրությունների թիվը ավելացել է 2562-ով, իսկ քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմում-բողոքներինը՝ 37-ով: Հանձնաժողով մուտքագրված գրությունների ավելացումը կապված է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հեռարձակած շաբաթական ոչ սեփական արտադրության գեղարվեստական, վավերագրական, անիմացիոն, մուլտիպլիկացիոն ֆիլմերի, հեռուստասերիալների և համերգների ցանկերի, ինչպես նաև համայնքների ավագանու անցկացված ընտրությունների նախընտրական քարոզչության անվճար և վճարովի եթերաժամանակի վերաբերյալ տեղեկությունների գրանցման պատճառով:

Հանձնաժողովի կողմից՝ Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով, Օրենքի կարգավորումների համաձայն կազմավորվել է երեք ժամանակավոր մրցութային հանձնաժողով (2021 թվականի փետրվարի 26, ապրիլի 22 և հոկտեմբերի 12), որոնց կողմից ընտրվել է Հանրային հեռարձակողի հինգ անդամ:

Հաշվետու տարում Հանձնաժողովի արխիվացված փաստաթղթերի պատշաճ պահպանման նպատակով, Քարտուղարությանը հատկացվել է ժամանակակից պահանջներին համապատասխան սենյակ: Գիտատեխնիկական մշակման են ենթարկվել Հանձնաժողովի 2011-2019 թվականների փաստաթղթերը, որի արդյունքում առանձնացվել է մշտական պահպանման համար 31 և անձնակազմին վերաբերող 4 գործ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2021 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու 2 մրցույթ: Հանձնաժողովի թափուր քաղաքացիական ծառայության պաշտոնների մրցույթները կազմակերպելու համար

կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մշակվել են հարցաշարեր թեստավորման և հարցազրույցի փուլերի համար:

Մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով Հանձնաժողովի 2 քաղաքացիական ծառայող մասնակցել է «Մեդիա կարգավորումները դեմոկրատիայի պայմաններում» միջազգային վերապատրաստման ծրագրին: 25 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված «Փոփոխությունների կառավարում», «Բարեվարքություն», «Որոշումների կայացում», «Կոնֆլիկտների կառավարում», «Ժամանակի կառավարում», «Բողոքների բավարարում», «Բանակցությունների վարում», «Տեղեկության հավաքագրում և վերլուծություն», «Հաշվետվությունների մշակում», «Խնդրի լուծում» «Ելույթների նախապատրաստում և կազմակերպում», «Փաստաթղթերի նախապատրաստում» թեմաներով հեռավար և առկա դասընթացներին:

3 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Ծրագրային բյուջետավորում» թեմայով դասընթացներին:

Հանձնաժողովում ժամանակավոր թափուր պաշտոնների համար կնքվել է 4 ժամկետային աշխատանքային պայմանագիր, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում:

Հանձնաժողովի 8 քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվել է խրախուսանք, 4 քաղաքացիական ծառայողի նկատմամբ նշանակվել է ծառայողական քննություն, որից 2-ի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:

Հանձնաժովի հաստիքացուցակում, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարվել են փոփոխություններ՝ կապված Հանձնաժողովի կանոնադրության փոփոխությունների հետ:

Հավելված 1

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2021 թվականի տարեկան հաղորդման

Ստորև ներկայացնում ենք վերջին 3 տարիների ընդհանուր գովազդային մուտքերի ծավալը՝ համեմատելով օգտագործված ժամանակի տևողությունը և հավաքագրած TRP (Target Rating Points)[1] վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքները.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՓՈՒՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԸ

Հաշվարկի հիմքում ընկած է տեսալսողական ծրագրեր հեռարձակող ընկերությունների կողմից հրապարակված գնացուցակները (տեսալսողական հաղորդումների ընթացքում գովազդվող ապրանքները հաշվարկված չեն)



TRP (Target Rating Points)[1] *- գովազդային հաղորդագրություն տեսած/ լսած, թիրախային լսարանի գնահատականների ընդհանուր թիվը:*

ԲԱՆԱՁԵՎ՝
TRP (Target Rating Points) = Rating1+Rating2+… Rating N
կամ
$TRP = \sum TVR^2$
TVR^2 - բոլոր հեռուստաընկերությունների վարկանիշների գումար:

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՈՒՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԸ 2021 Թ.

Հաշվարկի հիմքում ընկած է լսողական ծրագրեր հեռարձակող ընկերությունների կողմից հրապարակված գնացուցակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԸ 2019 – 2021 Թ.Թ.

Ստորև ներկայացնում ենք վերջին 3 տարիների գովազդային մուտքերի ծավալը (մլն. ՀՀ դրամ) Հաշվարկի հիմքում ընկած է լսողական ծրագրեր իրականացնող ընկերությունների կողմից հրապարակված գնացուցակները



Հավելված 2

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2021 թվականի տարեկան հաղորդման

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՎԱԾ՝ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՍԵՐԻԱՆ, ՀԱՄԱՐԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«Գեղամա»	ՀՎ № 001, 21.08.2020թ.
2	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	«Ֆորտունա»	ՀՎ № 002, 21.08.2020թ.
3	«ՑԱՅԳ» ՍՊԸ	«Ցայգ»	ՀՎ № 003, 21.08.2020թ.
4	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	«Կենտրոն Թիվի»	ՀՎ № 004, 21.08.2020թ.
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	«Լոռի»	ՀՎ № 005, 21.08.2020թ.
6	«ՇԱՐԿ» ՍՊԸ	«5-րդ ալիք» «5 պլյուս» «5-րդ ռադիոալիք»	ՀՎ № 006, 21.08.2020թ.
7	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	«Կոտայք Թի Վի»	ՀՎ № 007, 21.08.2020թ.
8	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	«Երկիր մեդիա»	ՀՎ № 008, 28.08.2020թ.
9	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	«Ալտ»	ՀՎ № 009, 28.08.2020թ.
10	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	«Անկյուն գումարած 3»	ՀՎ № 010, 28.08.2020թ.
11	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	«Ռադիո Երևան»	ՀՎ № 011, 28.08.2020թ.
12	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	«Բուն Թիվի»	ՀՎ № 012, 28.08.2020թ.
13	«ՕԴԱԿ» ՍՊԸ	«Սոնգ Թիվի» «Թրավելինգ Թիվի»	ՀՎ № 013, 28.08.2020թ.
14	«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ	«Ա1+»	ՀՎ № 014, 28.08.2020թ.
15	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«Շանթ» «Շանթ Պրեմիում» «Շանթ Մյուզիք» «Շանթ Նյուզ» «Շանթ Սերիալ» «Շանթ Քիդս» «Շանթ Սպորտ» «Շանթ Քոմեդի» «Շանթ Գյումրի» «Շանթ Ֆիլմ» «Շանթ Քուքինգ»	ՀՎ № 015, 04.09.2020թ.
16	«ՄԵԴԻԱ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«Արարատնյուզ Թի Վի»	ՀՎ № 016, 04.09.2020թ.
17	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	«Արմենիա» «Արմենիա Պրեմիում» «Տունտունիկ» «Քոմեդի» «Սինեման»	ՀՎ № 017, 08.09.2020թ.

		«ՀայԿինո» «Ջան Թիվի» «Սերիալ»	
18	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	«ՄԻԳ թիվի» «ՄԻԳ ռադիո»	ՀՎ № 018, 08.09.2020թ.
19	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ա-ԹԻՎԻ»	ՀՎ № 019, 08.09.2020թ.
20	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	«Կինոման» «ֆիլմզոն» «Հայ Թիվի» «Թավա Թիվի» «ԽաղԱլիք» «Արմնյուզ 24» «Բազմոց Թիվի» «ֆիթնես Թիվի» «Մուզզոն»	ՀՎ № 020, 18.09.2020թ.
21	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ	«Հայկական երկրորդ հեռուստաալիք»	ՀՎ № 021, 18.09.2020թ.
22	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ	«Արմնյուզ»	ՀՎ № 022, 18.09.2020թ.
23	«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	«Հիբրիդ Ռեստ» «Հիբրիդ Ֆիլմ» «Հիբրիդ Սպորտ» «Հիբրիդ Էդուքեյշընն»	ՀՎ № 023, 18.09.2020թ.
24	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	«Զանգեզուր ՏՎ»	ՀՎ № 024, 18.09.2020թ.
25	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	«ԱՐ հեռուստա ընկերություն»	ՀՎ № 025, 18.09.2020թ.
26	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	«Նոր Հայաստան»	ՀՎ № 026, 18.09.2020թ.
27	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«Ֆրի Նյուզ»	ՀՎ № 027, 18.09.2020թ.
28	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Տավուշ ՏՎ»	ՀՎ № 028, 28.09.2020թ.
29	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Դելտա Թիվի» «Դելտա Թրեվլ» «Դելտա Մյուզիք»	ՀՎ № 029, 19.10.2020թ.
30	«ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ	«Ֆակտոր»	ՀՎ № 030, 19.10.2020թ.
31	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«21 Թիվի»	ՀՎ № 031, 19.10.2020թ.
32	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ	«ԳԱԼԱ հեռուստա ընկերություն»	ՀՎ № 032, 19.10.2020թ.
33	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	«Առաջին Թիվի»	ՀՎ № 033, 19.10.2020թ.
34	«ՊՐՈԳՐԵՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Աշտարակ Թիվի»	ՀՎ № 034, 26.10.2020թ.
35	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	«Արմա Թի-Վի»	ՀՎ № 036, 02.11.2020թ.
36	«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Նուռ» «Վելարի» «Սան Թիվի» «Այ Թի Սի» «Արմթուն Թիվի» «Վի»	ՀՎ № 037, 02.11.2020թ.
37	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«Առաջինի լրատվական ալիք»	ՀՎ № 038, 10.11.2020թ.
38	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ազատություն Թիվի»	ՀՎ № 039, 03.02.2021թ.

39	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	«Թիվ 1»	ՀՎ № 040, 03.02.2021թ.
40	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Էֆ Թիվի» «Էֆ Քիդս» «Արարատ Թիվի» «Արարատ Ռադիո»	ՀՎ № 041, 19.02.2021թ.
41	«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊԸ	«Ռեալ Թի Վի»	ՀՎ № 042, 19.02.2021թ.
42	«ԻԳԼ ԱՅ» ՍՊԸ	«Թիվի 9 էյ էմ»	ՀՎ № 043, 12.03.2021թ.
43	«ՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«Նոյյան Տապան»	ՀՎ № 044, 02.04.2021թ.
44	«ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ	«Ռադիո Դրայվ»	ՀՎ № 045, 27.05.2021թ·
45	«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ	«Էֆ Էմ ռադիո»	ՀՎ № 046, 04.06.2021թ.
46	«ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Հոուփ»	ՀՎ № 047, 11.06.2021թ.
47	«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Զարկ Ֆմ»	ՀՎ № 048, 11.06.2021թ.
48	«ՍՎԳ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	«Ռադիո Էներջի»	ՀՎ № 049, 17.06.2021թ.
49	«ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Վիվառո Սպորտ+» «Վիվառո Սպորտ» «Վիվառո Սպորտ Լայֆ»	ՀՎ № 050, 06.08.2021թ.
50	«168 ԺԱՄ» ՍՊԸ	«168 Ժամ»	ՀՎ № 051, 06.08.2021թ.
51	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	«Ռադիո Վան»	ՀՎ № 052, 04.11.2021թ.
52	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	«Ռուսսկոյե ռադիո»	ՀՎ № 053, 04.11.2021թ.
53	«ԷԳԱԼԻՏԵ» ՍՊԸ	«Ջազ Էֆ Էմ»	ՀՎ № 054, 26.11.2021թ.

Հավելված 3

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2021 թվականի տարեկան հաղորդման

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՄԱՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	N 186 16.10.2012թ.-16.10.2022թ.
2	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	N 202 01.04.2015թ.-01.04.2025թ.
3	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 208 24.11.2015թ.-24.11.2025թ.
4	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 218 14.01.2017թ.-14.01.2027թ.
5	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի մարզ, Սյունիքի մարզ	N 228 03.10.2017թ.-03.10.2027թ.
6	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի մարզ, Լոռու մարզ	N 229 03.10.2017թ.-03.10.2027թ.
7	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 252 22.12.2017թ.-22.12.2027թ.
8	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 255 10.04.2018թ.-10.04.2028թ.
9	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 257 05.05.2018թ.-05.05.2028թ.
10	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Գեղարքունիքի մարզ	ԿՀ N 269 28.08.2019թ.-28.08.2029թ.
11	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի մարզեր	ԿՀ N 272 08.10.2019թ.-08.10.2029թ.
12	«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 281 14.07.2020թ.-14.07.2030թ.
13	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի,Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի մարզեր	ԿՀ N 283 15.09.2020թ.-15.09.2030թ.
14	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 285 25.09.2020թ.-25.09.2030թ.
15	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 286 24.10.2020թ.-24.10.2030թ.
16	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 311 29.04.2021թ.-29.04.2031թ.

17	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 324 24.09.2021թ.-24.09.2031թ.
18	ՄԻՔԱՅԵԼ ՇՈԿԱՐՅԱՆ ԱՁ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 325 28.09.2021թ.-28.09.2031թ.
19	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 326 21.10.2021թ.-21.10.2031թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 184 15.06.2012թ.-15.06.2022թ.
2	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012թ.-16.06.2022թ.
3	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	N 203 07.07.2015թ.-07.07.2025թ.
4	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 276 21.03.2020թ.-21.03.2030թ.
5	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 280 27.05.2020թ.-27.05.2030թ.
6	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 315 11.06.2021թ.-11.06.2031թ.
7	«ԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 318 22.07.2021թ.- 22.07.2031թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N 194 11.01.2014թ.-11.01.2024թ.
2	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	N 251 15.12.2017թ.-15.12.2027թ.
3	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	ԿՀ N 271 08.10.2019թ.-08.10.2029թ.
4	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	ԿՀ N 278 28.04.2020թ.-28.04.2030թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	ԿՀ N 275 07.03.2020թ.-07.03.2030թ.
2	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	ԿՀ N 288 24.12.2020թ.-24.12.2030թ.
3	ՄԱՆՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ՓԱՇԻԿՅԱՆ ԱՁ	ՀՀ Արագածոտնի մարզ	ԿՀ N 310 10.02.2021թ.-10.02.2031թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N 183 22.05.2012թ.-22.05.2022թ.
2	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	N 207 09.11.2015թ.-09.11.2025թ.
3	«ԱՐՏ- ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	ԿՀ N 309 06.02.2021թ.-06.02.2031թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՈՒԶ ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	N 221 29.07.2017թ.-29.07.2027թ.

2	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N 250 21.11.2017թ.-21.11.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ.-28.12.2022թ.
2	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 219 04.07.2017թ.-04.07.2027թ.
3	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	ԿՀ N 265 09.04.2019թ.-09.04.2029թ.
4	«ՌԵԳԻՈՆՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	ԿՀ N 284 23.09.2020թ.-23.09.2030թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 206 09.11.2015թ.-09.11.2025թ.
2	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 212 05.04.2016թ.-05.04.2026թ.
3	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ԿՀ N 259 20.07.2018թ.-20.07.2028թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 198 06.09.2014թ.-06.09.2024թ.
2	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 220 25.07.2017թ.-25.07.2027թ.
3	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N 223 03.08.2017թ.-03.08.2027թ.
4	«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 254 18.01.2018թ.-18.01.2028թ.
5	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 256 05.05.2018թ.-05.05.2028թ.
6	«ԱՐՄՔՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 266 18.06.2019թ.-18.06.2029թ.
7	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 277 22.04.2020թ.-22.04.2030թ.
8	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 282 10.09.2020թ.-10.09.2030թ.
9	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 287 26.11.2020թ.-26.11.2030թ.
10	ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 317 22.07.2021թ.- 22.07.2031թ.
11	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 319 05.08.2021թ.- 05.08.2031թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N 182 18.05.2012թ.-18.05.2022թ.
2	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N 222 02.08.2017թ.-02.08.2027թ.
3	ՕՖԵԼՅԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՁ	ՀՀ Շիրակի մարզ	ԿՀ N 289

			24.12.2020թ.-24.12.2030թ.
4	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	ԿՀ N 316 10.07.2021թ.-10.07.2031թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՒՍՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199 09.10.2014թ.-09.10.2024թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 201 24.03.2015թ.-24.03.2025թ.
3	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 209 29.12.2015թ.-29.12.2025թ.
4	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	N 215 21.12.2016թ.-21.12.2026թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N 227 30.09.2017թ.-30.09.2027թ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ 2021